Ա նկախ նրանից, թե ինչ է մտածում Փաշինյանը՝ դեմագոգիայո՞վ է զբաղվում, թե՞ իսկապես մտքին կա՝ հեռանալ, եկեք մի պահ պատկերացնենք, թե ինչ տեղի կունենա Հայաստանում հունիսի 7-ից հետո, եթե նրան հաջողվի մնալ իշխանության ղեկին, եթե կեղծի ընտրության արդյունքները եւ ռեպրեսիվ մեքենայի միջոցով ճնշի դժգոհության ալիքը:

Կարդացեք՝ էջ 5

Պ ատկերացնո՞ւմ եք, ինչքան անմխիթար է Փաշինյանի վիճակը, որ այս ընտրություններում նրան բացահայտ աջակցում են այնպիսի գործիչներ, որոնց գործունեությունն ուղեկցվել է սեփական ու այլ ժողովուրդների նկատմամբ բազում հանցանքներով, մարդկության դեմ կատարված ռազմական հանցագործություններով, ապօրինություններով:

Կարդացեք՝ էջ 6

Սերը բացառելը չէ, բաժանելը չէ, կասկածելը չէ: Սերը հարգանք է, արժանապատվություն է: Սերը մյուսին հնարավորություն տալն է: Երբ Հայաստանը մոտենում է կարեւոր ընտրություններին, իմ հույսը շատ պարզ է: Հուսով եմ, որ կհիշենք՝ ոչ մի քաղաքական ուժ Հայաստանի տերը չէ, ոչ մի քաղաքական գործիչ Հայաստանի տերը չէ:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 87 (4222), 2 հունիս, երեքշաբթի, 2026

www.hraparak.am

Իշխանական շրջանակներից ստացած տեղեկությունների համաձայն՝ հունիսի 7-ի ընտրություններում առանձնակի կարեւոր է հետեւել ընտրողների, այսպես կոչված, լրացուցիչ ցուցակներին: Հայաստանում ընտրողների լրացուցիչ ցուցակներում սովորաբար ընդգրկվում են այն քաղաքացիները, որոնք հիմնական ընտրացուցակում չկան, բայց ընտրության օրը կամ դրանից առաջ ստացել են ընտրելու իրավունք տվյալ տեղամասում: Օրինակ՝ ովքեր ընտրություններից առաջ գրանցվել են նոր հասցեում, զինծառայողները, կալանավայրերում գտնվող՝ ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիները, ընտրության օրվա դրությամբ հաշվառման կամ տվյալների փոփոխության պատճառով հիմնական ցուցակում չընդգրկված անձինք, դատարանի որոշմամբ ընտրելու իրավունքը վերականգնած քաղաքացիները եւ այլք: Լրացուցիչ ցուցակները կազմվում են օրենքով սահմանված կարգով եւ հրապարակվում են ընտրատեղամասերում՝ հիմնական ցուցակից առանձին: Սակայն բանն այն է, որ դրանց նկատմամբ վերահսկողություն սահմանելը, պարզելը՝ արդյո՞ք յուրաքանչյուր ընդգրկման հիմքն օրինական է, թե՞ հատուկ մարդկանց են գրանցում տարբեր տեղամասերի լրացուցիչ ցուցակներում, որ հավելյալ ձայներ ապահովեն: Արդյո՞ք մի տեղամասում լրացուցիչ ցուցակով ընտրությանը մասնակցած անձը մեկ այլ ընտրատեղամասում էլ չի քվեարկել: Ի դեպ, խոսակցություններ կային, որ այս մեխանիզմը կիրառվել է Վաղարշապատի ընտրությունների ժամանակ, երբ լրացուցիչ ցուցակներով տասնյակ մարդիկ են քվեարկել, սակայն այդ փաստը պատշաճ ուշադրության չարժանացավ ընդդիմության կողմից:

Նիկոլ Փաշինյանը հանգստացրել է թիմին, թե հունիսի 8-ից կավարտվի ռուսական կոշտ վերաբերմունքն իրենց իշխանության նկատմամբ, եւ թե դա իբր պայմանավորված է Հայաստանի ընդդիմությանն աջակցությամբ: Բանն այն է, որ ՔՊ-ում ոմանք քաջ գիտակցում են, որ եթե ռուսական սահմանափակումները երկար շարունակվեն, Հայաստանի տնտեսությունը պայթելու է՝ դրանից բխող լուրջ հետեւանքներով: Դա է պատճառը, որ Փաշինյանը փորձում է հանգստացնել նրանց: Ուղղակի քանի որ ՔՊ-ում մեկ մարդու իշխանություն է եւ դիկտատուրա, ոչ ոք չի համարձակվում Փաշինյանին խորհուրդ տալ՝ միջոցներ ձեռնարկել, փորձել շտկել իրավիճակը: Փաշինյանի հանգստացնող «թերապիան», սակայն, ոչ բոլորն են արժանահավատ համարում: Կարծում են, որ սա նրա հերթական ավանտյուրան է եւ պարտությունը հաղթանակ ներկայացնելու իր ոճը:

Կաշառք եւ կեղծիք

Երեկ Հրազդանից մի հիվանդ մարդու ոստիկանություն էին տարել, փորձել էին վախեցնել-ճնշելով ցուցմունք կորզել, թե ԲՀԿ-ին հարող մի անձնավորությունից ընտրակաշառք է ստացել: Մարդը, որ լուրջ առողջական խնդիրներ ուներ եւ իր խնամքին՝ երկու երեխա, վախեցած էր ու շփոթահար: Նա մեր լրագրողին պատմել էր, որ ապրիլի 19-ին հոր մահվան քառասունքն է եղել, իր հարեւանը 20 հազար դրամ է տվել, հայկական ավանդույթի համաձայն, դա ոստիկանները փորձել էին որպես «ընտրակաշառք» ձեւակերպել: Ուրեմն այս իշխանությունը, որը վերջին 6-7 ամիսներին զբաղված է պետբյուջեի հաշվին «ընտրակաշառք» բաժանելով, իսկ թոշակների բարձրացումն ու տարեցների վիրահատությունները, արտոնյալ վարկերն ու հարբած վարորդների վկայականների վերականգնումն այլ կերպ չես անվանի, փորձում է ընդդիմությանը մեղադրել ընտրակաշառք բաժանելու համար: Ամեն գնով վերարտադրվելու ցանկությունն այնքան մեծ է, որ ոչ մի բանի առաջ կանգ չեն առնում՝ տասնյակներով կեղծ գործեր են հարուցում, կալանքի միջնորդություններ են տանում դատարաններ, խեղճուկրակ մարդկանց նկատմամբ անբարո ճնշումներ են գործադրում: Միաժամանակ ադմինիստրատիվ ռեսուրսի աննախադեպ կիրառում ենք տեսնում, ստի ու կեղծիքի, արգելված քարոզչական հնարքների, անիրականանալի խոստումների մեծ հեղեղ, որը տեղում է ընտրողների գլխին: Իհարկե, ընդդիմությունն էլ հետ չի մնում՝ ոսկե սարեր են խոստանում եւ այս իշխանությունների բոլոր ապօրինությունների չեղարկում: Բայց գոնե ընդդիմությունը ստի ու մանիպուլյացիաների նման «պատմություն» չունի իր ետեւից թողած: Եվ աշխարհի բոլոր ընդդիմություններն են խոստումներ տալիս, որ գան իշխանության: Իսկ աշխարհի բոլոր իշխանություններն ընտրությունների շեմին պատասխան են տալիս իրենց արած-չարածի համար:

Եթե ադմինիստրատիվ ռեսուրսը չլիներ, ապա Նիկոլ Փաշինյանի նախընտրական հանրահավաքներին 10-20 մարդ էլ չէր մասնակցի: Նախկին հեղափոխական առաջնորդի իմիջից ոչինչ չի մնացել, եւ նրա հետեւորդների շարքերն էլ խիստ նոսրացել են: Այնպես, որ անգամ իր ծննդավայր Իջեւանում այսքան ադմինիստրատիվ լծակներ կիրառելով՝ չեն կարողանում մի փոքր հրապարակ լցնել: Իջեւանը փոքր քաղաք է, այնտեղ չկան առանձնապես մեծ հրապարակներ: Հայտնի հրապարակը կոչվում է երգող շատրվանների հրապարակ, որտեղ երեկոյան ժամերին մարդիկ դուրս են գալիս զբոսանքի՝ շատրվաններով հիանում, քայլում Աղստեւ գետի ափին եւ այլն: Այնտեղ են նաեւ տեղի ունենում բոլոր համերգները, միջոցառումները: Սակայն կիրակի օրը Փաշինյանի նախընտրական հավաքը տեղի է ունեցել ոչ թե Իջեւանի հրապարակում, այլ նախկին զինկոմիսարիատի հարեւանությամբ՝ բնակելի շենքերի արանքում: Իջեւանցիներն այդ տարածքը վերջին տարիներին անվանում են Կասկադ: Դա բավականին փոքր տարածք է, որը լցնելը բարդ չէ, դրա համար էլ այդ տեղանքն է ընտրվել, ոչ թե Իջեւանի գլխավոր հրապարակը:

ԲԱՆԱԿՈՒՄ ԹԱՓՈՎ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ ԵՆ ԱՆՈՒՄ

Մեր տեղեկություններով, Զինված ուժերում սկսվել է բացահայտ քարոզչություն՝ գործող իշխանության օգտին: Քարոզչական առաքյալներ են նշանակվել զորամասերի հրամանատարները կամ այդ պարտականությունը կատարող զինվորականները, որոնք, մեր աղբյուրի պատմելով, հատկապես վերջին օրերին զորքի հետ «դաստիարակչական», «լուսավորչական» աշխատանքներ են տանում: Նախ, երկարաշունչ ճառեր են ասում զորքի առաջ, թե հունիսի 7-ի ընտրություններին պարտավոր են ընտրել այն ուժին, որին արժանի են համարում, իսկ վերջում հարկ են համարում զորքին պարտադրել իրենց հեղինակավոր կարծիքը, որ, դիցուք, ինքը՝ հրամանատարը, անձամբ ընտրելու է այս իշխանությանը, Նիկոլ Փաշինյանին, քանի որ նրանց է համարում արժանի, քանի որ նրանք են բանակի համար այսինչ, այնինչ բանն արել: Մենք գրել էինք, որ ավելի քան 200 զինվորականի են վերջին ամիսներին հանել ԶՈՒ-ից՝ «հետախուզական» աշխատանքների արդյունքում բացահայտելով, որ նրանք ոչ իշխանական հայացքներ ունեն: Նրանց անսպասելիորեն հայտնել են, թե նպատակահարմար չեն գտնում, որ ծառայությունը շարունակեն: Այս մթնոլորտում դժվար է պատկերացնել մի զինվորականի, որը ղեկավարության կամքին հակառակ կգնա:

ԵԹԵ 80 ՏՈԿՈՍ ԵՎ ԱՎԵԼԻ ՄԵՐԺՈՒՄ Է ԵՂԵԼ, ԱՊԱ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ԴԱԴԱՐԵՑՆԵՐ ՀԱՐՑՈՒՄԸ

IRI

«Հրապարակի» զրուցակիցը ԵՊՀ Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր **Արթուր Աթանեսյանն** է:

- EuroNews-ը, հղում անելով Breavis-ի հարցումներին, որոնք իրականացվել են Միջազգային հանրապետական ինստիտուտի IRI պատվերով, մի սանդղակ է տարածել, որտեղ նշել է, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը, ըստ հարցման, հավաքելու է ավելի քան 65 տոկոս քվե, ընդդիմադիր ուժերն անգամ չեն հաղթահարելու 12 տոկոսի շեմը: «Բրեվիս» ընկերությունը հրապարակումից ժամեր անց հերքել է այդ նյութը՝ նշելով, որ դրանք չեն արտացոլում ընկերության իրականացրած հարցման հրապարակված արդյունքները: Ինչ նախադեպ է սա, եւ ինչո՞ւ են արեւմտյան կառույցները որոշել նման եղանակով կեղծել իրականությունը:

- Սոցիոլոգիական հարցումները եւ սոցիոլոգիան, որպես գիտություն, դիտարկում են այնպես, ինչպես մարդիկ, օրինակ, գլխացավից ազատվելու համար խմում են դեղահաբ, օրինակ՝ Ադվիլ, բայց դա բնավ չի խոսում առողջապահության մասին: Եթե մեկին օգնում է այդ դեղահաբը, եւ նա ասում է, որ լավ դեղ է, իսկ մյուսին դա չի օգնել, եւ նա պնդում է, որ դեղահաբը սխալ է, վատն է, ապա գուցե երկուսն էլ ճիշտ են այն համատեքստում, թե ինչ նպատակ են իրենք հետապնդում եւ ինչ են ստանում, բայց դա բնավ չի նշանակում, որ այս հարցն առողջապահական հարց է եւ արտացոլում է առողջապահական խնդիրները: Նախընտրական պայքարի ժամանակ քաղաքական գործիչները եւ կուսակցություններն ինստրումենտալիզացնում են սոցիոլոգիան՝ դարձնելով այն սեփական առաջընթացի գործիք, այն կիրառելով իրենց գովազդի համար, եւ, բնականաբար, եթե ստացված արդյունքներն իրենց օգտին չեն, դրանք չեն ներկայացնում հանրությանը, եւ հակառակը՝ եթե թվերն իրենց դուր են գալիս, ներկայացնում են եւ, բնականաբար, տարածում դրանք: Առողջապահական ոլորտում բժիշկը չի կարող առաջնորդվել պացիենտին դուր գալու տրամաբանությամբ, բժիշկը մարդուն բուժելու համար է: Սոցիոլոգիան նույնպես բուժելու համար է, այլ ոչ թե այս կամ այն ուժին դուր գալու: Օբյեկտիվ ճշմարտությունը պետք է ասել հասարակությանը: Պետք է միանշանակ տարբերել սոցիոլոգիան եւ սոցիոլոգիական գործիքի կիրառումը՝ քաղաքական նպատակներում: Սրանով արդեն շատ բան է պարզ դառնում: Նախընտրական փուլում գրեթե բոլոր կազմակերպությունների, ընկերությունների աշխատանքը, որոնք այլ ժամանակահատվածներում բավականին բծախնդիր են իրենց աշխատանքի նկատմամբ եւ ուշադիր, այս փուլում ներկայացնում են հեռախոսային հարցումներ, որոնք չեն արտացոլում իրականությունը:

- Հեռախոսային հարցումներն ինչո՞վ են տարբերվում դեմառդեմ հարցումներից:

- Հեռախոսային հարցումներն ունեն մեկ մեծ թերություն. դու չես տեսնում ռեսպոնդենտին: Նա կարող է լինել մեկը, որն ունի վատ տրամադրություն եւ ունի հակառակվելու ցանկություն, ուստի կարող է ասել ցանկացած բան, որ գալիս է մտքին: Այդ մարդը կարող է լինել ֆիզիկական վատ վիճակում գտնվող մեկը, որը բուժհաստատությունում է, կամ տաքսու վարորդ, որը մենակ չէ այդ պահին, եւ որպեսզի հետագայում խուսափի մյուս տաքսու վարորդների հետ վիճաբանությունից, կարող է ասել այն, ինչն անշառ է եւ ընդունված է ասել: Մենք շատ լավ գիտենք, որ մարդիկ Հայաստանում ունեն անկեղծանալու խնդիր: Մեզ համար, ինչպես «Կտոր մը երկինք» ֆիլմում, համայնքը զորավոր է: Հաճախ սոցհարցումների ընթացքում մարդիկ ասում են ոչ թե այն, ինչ մտածում են, այլ՝ այն, ինչ մտածում է համայնքը: Կարող եմ նշել եւս մեկ այլ շատ կարեւոր թերություն, որն առկա է այսօր. դա մերժումների մեծ տոկոսն է: Լինում են դեպքեր, երբ մարդկանց 30-40 տոկոսը մերժում է պատասխանել հարցերին:

- Այս հարցումների պարագայում հարցվողների շուրջ 84 տոկոսը հրաժարվել է պատասխանել հարցերին, եւ միայն 16 տոկոսի կարծիքը ներկայացվել է որպես մի ամբողջ հասարակության տեսակետ:

- Դա նշանակում է, որ մերժողները գոնե մասամբ ունեն քաղաքական կողմնորոշում, դատելով 2021-ի ընտրության մասնակցության թվերից, նշանակում է, որ այժմ մերժողների կեսն ունի հստակ տեսակետ, սակայն այս հարցումներում նրանց կարծիքը տեղ չի գտել, իսկ փոքրամասնության կարծիքը ներկայացվել է որպես ողջ բնակչության կարծիքի արտացոլում: Ստացվում է, որ սխալի հավանականությունն աճում է, եւ նման դեպքերում հարցումները պետք է ընդունել վերապահումներով: Մենք՝ սոցիոլոգներս, հարցումներին առաջին հայացքից պետք է նայենք ոչ թե արդյունքների տեսանկյունից, այլ՝ մեթոդիկայի: Ես նման հետազոտություններ պատվիրողներին, այս պարագայում՝ քաղաքական սուբյեկտներին խորհուրդ եմ տալիս՝ եթե ուզում եք իմանալ ճշմարտությունը, այլ ոչ թե գովերգող տվյալներ կամ ձեզ համար հաճելի տվյալներ, իրականացրեք որակյալ հետազոտություններ, սոցիոլոգների հետ պլաններ կազմելով, այլ ոչ թե հրապարակեք ինչ-որ թվեր, որոնք հանրային կարծիքի վրա ներազդելու համար են: Պետք է հասկանալ, թե ինչն է ճիշտ, եւ ինչն է արդյունավետ, ինչն է պրոբլեմային, եւ այս ամենի վրա ոչ միայն կազմակերպել նախընտրական կամպանիան, այլեւ՝ քաղաքական ողջ ընթացքը: Դրանք պետք է միտված լինեն օբյեկտիվ խնդիրների լուծմանը:

- Այսինքն՝ այս հարցումները ոչ պրոֆեսիոնալ են, ունեն բացառապես քարոզչական բնույթ, եւ պետք է անտեսել դրանք:

- Եթե 80 տոկոս եւ ավելի մերժում է եղել, ապա ընկերությունը պետք է դադարեցներ հետազոտության ընթացքը եւ կիրառեր մեկ այլ մեթոդ: Օրինակ՝ ռեալ օֆլայն հետազոտություն պետք է իրականացներ կամ այլ մեթոդներով առաջնորդվեր: Ես՝ որպես ոլորտի մասնագետ, երբեք չէի ներկայացնի մի հետազոտության արդյունքներ, որտեղ կան այդքան մերժումներ: Այն որեւէ պարագայում չէր կարելի ներկայացնել որպես համազգային ընտրանքով արված հետազոտություն: Գովելի է, իհարկե, որ նրանք ասում են, թե իրականում որքան մերժումներ են ստացել, սակայն դա նույնն է, ինչ չես ստացել արդյունքներ: Գրեթե ամեն ամիս՝ մի քանի անգամ, ի դեպ, դրանք նաեւ ոչ սոցիոլոգիական ընկերություններ են, իրականացնում են հետազոտությունների արդյունքներ, որոնք եւս չեն արտացոլում իրականությունը: Երբեմն նաեւ լրագրողներն են հարցումներ իրականացնում, ինչը եւս մեծ խնդիր է մեզ համար: Պատկերացրեք, թե քաղաքացիներին որքան են անհանգստացնում, մերժումները նաեւ գալիս են սրանից:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ՈՍԿԵՊԱՐՑԻՆԵՐԻՆ ՀՈՐԴՈՐԵՑ ՀԱՇՏՎԵԼ 30 ՄԵՏՐԻՑ ԱԴՐԲԵՋԱՆԸ ՏԵՍՆԵԼՈՒ ՀԵՏ

Նիկոլ Փաշինյանը նախընտրական քարոզչության ժամանակ այնպես է ներկայացնում իր կողմից Ադրբեջանին ՀՀ տարածքների հանձնումը, կարծես թե դա մեծ հաջողություն է՝ ուղղակի հաղթանակ, որով փրկվել ենք մեծ դժբախտությունից եւ դրախտում հայտնվել: Մայիսի 29-ին՝ Տավուշում քարոզարշավի ժամանակ անդրադառնալով Կիրանցից սկիզբ առած Սրբազան պայքարին՝ նա հայտարարել է. «Եթե մենք 2024 թվականին տրվեինք ճնշումների եւ գնայինք ուրիշ ճանապարհով, մենք այսօր առնվազն Իջեւանի կեսը կորցրած էինք լինելու: Այն, ինչ որ անում էին, այդ թվում՝ խաչը դոշներից կախած, դա դավադրություն էր Հայաստանի պետության դեմ: Այսօր էլ խաչով մարդիկ կան, որ դավադրություն են անում, եթե այդ խաչով մարդկանց հետեւից մեր ժողովուրդը գնար, այսօր Իջեւանի կես տեղով էր անցնելու սահմանը՝ լավագույն դեպքում: Իսկ այսօր Իջեւանն ազատ է, այսօր Իջեւանը բարեկեցիկ է, այսօր Գանձաքարում դպրոց կա, այսօր Կիրանցում դպրոց կա, Կիրանցի երեխաներն ապրում են առանց անվտանգության մի մտավախության: Ասում են՝ ո՞վ է երաշխավորը, ո՞վ է երաշխավորը, ես եմ երաշխավորը»:

Իբր ճիրք էր Իջեւանն անազատ եղել, որ Նիկոլ Փաշինյանն այն ազատել է եւ հիմա իջեւանցիներին շնորհավորում է այդ ազատագրման համար: Փաշինյանը բազում անգամներ դրժել է իր խոստումները, նույն հարցի վերաբերյալ տարբեր ժամանակներում տրամագծորեն հակառակ տեսակետ է հայտնել, նա ինչպես կարո՞ղ է Կիրանցի անվտանգության երաշխավորը լինել:

Մայիսի 30-ին էլ սահմանամերձ Ոսկեպարում հավաքվածներին Փաշինյանը հարցրեց՝ նրանք կարողանո՞ւմ են գնալ Ոսկեպարի եկեղեցի, այն թուրքին չե՞նք տվել: Ներկա գտնվող ոսկեպարցիները Փաշինյանին չասացին, որ 2024-ին սահմանազատման անվան տակ ապօրինի, միակողմանի կերպով տարածքները հանձնելու հետեւանքով Ոսկեպարի Սուրբ Աստվածածին եկեղեցին հայտնվել է նորահայտ սահմանի ուղիղ եզրին: Փաշինյանը հայտարարեց, որ ամենակարեւոր գործերից մեկը համարում է սահմանազատման գործընթացն ավարտին հասցնելը, որպեսզի ոսկեպարցի երեխաների համար կիսատ գործ չթողնեն: Նա ասաց. «Սահմանազատման կանոնակարգում մենք գրել ենք, որ տարած... սահմանները... Խորհրդային Միությո՞ւնն ենք վերցնում բազային սկզբունք՝ Ալմա-Աթիի, այսինքն՝ խորհրդային սահմանը որպես բազային սկզբունք, բայց եթե տեղեր կան մարդկանց կյանքի համար անհարմարություններ ա ստեղծում, ասենք, օրինակ, կտրվում են ճանապարհից, կտրվում են չգիտեմ.. կոմունիկացիաներից, բնականոն իրենց կյանքից, սահմանի այդ հատվածները պետք ա օպտիմիզացիայի ենթարկենք»: Եվ չպարզաբանեց, թե ինչ նկատի ունի օպտիմիզացիա ասելով, ու չբացատրեց, թե ինչպես եղավ, որ 2024-ի գարնանը սահմանազատման անվան տակ Կիրանցի 15 հեկտար հողերը հանձնեցին Ադրբեջանին, երբ Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանազատման հանձնաժողովների կանոնակարգը հաստատվեց դրանից հետո՝ նույն թվականի օգոստոսին: Չասաց նաեւ, թե ինչպես եղավ, որ մենք միայն հանձնողն ենք, Ադրբեջանը՝ ստացողը, երբ բարձրաձայն ասում էին, թե մենք էլ ստանալիք տարածքներ ունենք Տավուշի հատվածում, որոնք գտնվում են Ադրբեջանի վերահսկողության տակ:

Փաշինյանն ասաց, որ Ոսկեպարը սահմանազատմանը հավատում է, քանի որ սահմանազատումից առաջ 21 միլիոն դրամ պետական աջակցությամբ գյուղում 2 տուն էին կառուցում, հիմա՝ 50-ից ավելի: Նա հայտարարեց, որ Կիրանցում կատարված սահմանազատումը, միանշանակ, օգուտ է: Դա՝ այն դեպքում, որ Կիրանցի 15 հեկտար հողերի հանձնումից հետո աշնանացան ցորենի հեկտարները բազմակի կրճատվել են, գյուղի արոտավայրերի նվազեցումից հետո Կիրանցում պահվող խոշոր եղջերավորների քանակը 40 տոկոսով նվազել է: Փաշինյանը ոսկեպարցիներին Կիրանցի օրինակով փորձեց համոզել, որ սահմանազատման հետեւանքով Ադրբեջանի՝ ՀՀ սահմանին մոտենալով անվտանգության համար ռիսկերը չեն մեծանում: Ասաց՝ հիմա 21-րդ դարն է, կապ չունի՝ սահմանից 30 մետր ես հեռու, թե՝ 300 մետր, 30 կիլոմետր, թե՝ 300, սահմանից 1000 կմ հեռու, տանը նստած հեռուստացույց են նայում, պատուհանից ԱԹՍ-ն ներս է ընկնում: Այսպես նա ոսկեպարցիներին համոզում է, որ հաշտվեն՝ սահմանազատման հետեւանքով անկլավ հանդիսացող Վերին Ոսկեպարի հանձնումով Ադրբեջանը կարող է իրենցից 30 մետր հեռավորությամբ հաստատվել:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԹԵ ԲԱ՝ ԾԻՐԱՆՆ ԷԼ ԿՓԱԿԵՆՔ, ՋՏԱՆԴԱՄԻՆ ՓԱԿԵՔ՝ ՄԵՐ ՄՈՏ ԿԷԺԱՆԱՆԱ, ԾԻՐԱՆԻ ԱՐԱՂ ԿՔԱՇԵՆՔ

*ՔՊ-ական պատգամավոր **Գագիկ Մելքոնյանը**, որ չնայած նախընտրական ցուցակի հետին հորիզոնականներում է, երեկ մեզ վստահեցրեց, որ ակտիվ քարոզարշավ է իրականացնում:*



- Պարոն Մելքոնյան, քարոզարշավ անո՞ւմ եք, թե՞ լվացել եք Ձեր ձեռքերը, քանի որ անցողիկ տեղում չեք:

- Ի՞նչ լվալ, ես բոլոր տեղերով՝ մարզերով, տեղական բաներով անցնում եմ, ու էդ աշխատանքները կատարում ենք:

- Լայվ չե՞ք մտնում Ձեր կուսակից ընկերների պես, որ Ձեր առաջնորդին ցույց տաք՝ աշխատում եք:

- Ես էդ լայվը մտնում էի 2008-ին, 2009-ին, 10-ին, 11-ին, մինչեւ 14-ը, հիմի առանց լայվ եմ կարողանում գործունեություն ծավալել, ինձ չհավատալու բան չկա, վերջերս եղել եմ Գեղարքունիքի բոլոր գյուղերում, մարզպետի հետ անցել ենք, ժողովրդի հետ հանդիպել ենք, ժողովրդի դարդուցավը գրի ենք առել, Արմավիրի մարզ եմ գնացել նույն ձեւով, Ղափան պիտի գնամ առաջիկայում: Ասեմ, որ տպավորությունս բավականին ձեր համար հիասթափեցնող է, այսինքն՝ քո համար չէ, այլ՝ ընդդիմության: Երբ առաջներում՝ մինչեւ քարոզարշավ սկսելը, ես 50+1-ի կողմնակիցն էի, ասում էի՝ 50+1, հիմա ասում եմ՝ 60+1:

- Եթե այդքան մեծ վստահություն եք վայելում, ինչո՞ւ է ձեր առաջնորդն այդքան նյարդային, հարձակվում է քննադատողների վրա, նրանց բանտերը լցնելու սպառնալիքներ է հնչեցնում, մուննաթ գալիս, թե ինչու են ողջ մնացել:

- Մեր լրագրողների հետ ով էլ կարողանա մի օր յոլա տանել, երկրորդ օրը կդառնա հիստերիկ էլ, հոգեկան հիվանդ էլ, ամեն ինչ էլ:

- Խոսքը լրագրողների մասին չէ, այլ՝ ժողովրդի, որին ինքը սիրում է՝ իր ասելով:

- Ժողովուրդը շատ լավ ձեւով ընդունում է, ժողովրդի մեջ կան, չէ՞, մարդիկ, որոնք դժգոհ են այս իշխանությունից, նրանք են արտահայտում իրենց դժգոհությունը:

- Դա նորմալ չէ՞, կարելի՞ է դժգոհ մարդկանց սպառնալ, որ կոչնչացնի, կամ երեսով տալ, որ չեն զոհվել, Դուք ե՞լ եք Ձեզ քննադատողների հետ այդկերպ վարվում:

- Ոչ: Ուրեմն դա էն մարդկանց մասին է, ովքեր նմանատիպ հարցեր են բարձրացնում ու խաղում են մարդու ներվային համակարգի հետ: Էդ ամեն ինչին կարելի է հանգիստ նայել, հանգիստ խոսել, էս ամբողջ քարոզարշավի ընթացքում 12 տոկոս մարդ կարող է լինի, որոնց սովորեցրել են ու ուղարկել, որ սադրեն:

- Առավել եւս, որ ընդամենը 12 տոկոս են, ինչո՞ւ է պետության ղեկավարը նման անհավասարակշիռ պահվածք դրսեւորում:

- Մարդիկ, որոնք գալիս են սադրելու, ստանում են համապատասխան պատասխան, Դուք կոնկրետ բառեր եք մեջբերում, բայց չեք ասում՝ ինչը դառավ պատճառը՝ այդ բառերն ասելու:

- Իսկ ինչպե՞ս կմեկնաբանեք Ռուսաստանի կողմից արտահանումների արգելքները, քաղաքացիները գոհ լինե՞ն, որ իրենց բերքը, արտադրանքը նախկինի պես անխոչընդոտ չի արտահանվում: Դուք ե՞լ եք կարծում, որ ռուսները ոչ թե ձեր արտաքին քաղաքականությանն են դրանով պատասխանում, այլ խոչընդոտներ են ստեղծում, որ Սամվել Կարապետյանն ու Ռոբերտ Քոչարյանը հաղթեն:

- Նախ եկեք ճշտենք՝ անում են Ռոբերտ Քոչարյանի համար, Սամվել Կարապետյանը ո՛չ մեր երկրի քաղաքացի է, ո՛չ էլ իրավունք ունի ո՛չ պատգամավոր լինելու, ո՛չ էլ՝ վարչապետ:

- Նրա կուսակցությունը հայտարարել է հաղթելու դեպքում Սահմանադրությունը փոխելու մասին, որ Կարապետյանը կարողանա վարչապետ դառնալ:

- Ներողություն, բայց ամբողջ Ռուսաստանը լծվել է Քոչարյանի կառքին, 4 սպիտակ ձիով քաշում են, ճամփեք ա փակում, էս ա անում: Բայց Ռուսաստանում եթե խելացի դիվանագետներ լինեին, ընդհակառակը՝ պիտի ամեն ինչ այստեղ էժանացնեին, բերեին ժողովրդին ցույց տային, որ մենք ձեր ախպերներն ենք, գազը 380-ով էինք տալիս, հիմի դարձնում ենք 250, նավթ ուղարկեր մի քանի ցիստեռ էժան, որն Ադրբեջանն է ուղարկում:

- Ինչի՞ համար:

- Որպեսզի ժողովուրդը փոխվի, հասկանա, որ ռուսը մեր բարեկամն ա, ինքնաթիռների տոմսերի գներն էժանացներ, լիքը բան կար անելու:

- Բայց ժողովուրդը Ռուսաստանին չի ընտրելու, այլ ձեզ եւ ընդդիմադիրներին:

- Լսի, մենք Ռուսաստանի ֆորպոստ ենք եղել, հիմա ուզում ենք դրա տակից դուրս գալ: 2020 թվականին մեր ժողովուրդը սկսեց ատել Ռուսաստանին, մինչեւ 2020 թվականը մեր ամբողջ անվտանգությունը կառուցել էինք ՌԴ-ի հիմքի վրա, ասում էինք՝ ռուսները մեր փրկիչներն են, հենց ՌԴ դրոշը երեւաց Վարդենիսի վրա, ադրբեջանցիք կփախչեն մինչեւ Կիրովաբադ, բայց եղավ հակառակը՝ ադրբեջանցիք հայտնվեցին, ռուսները փախան: Դրանից հետո ժողովուրդն ատեց էդ մարդկանց, հետո, երբ Ղարաբաղը հանձնեցին, եթե ինքը սկսեր ամեն ինչն էժանացներ, ճանապարհները բացեր, Լարսում խցանում չստեղծեր, մեր ժողովուրդը կասեր՝ արա, էս մարդիկ իրոք մեր դաշնակիցներն են, հիմա իրանց արածների համար փոշմանել են: Բայց դրին՝ ամեն ինչ փակեցին, որից մենակ մենք չենք տուժում, իրանք էլ են տուժում. հիմա ծիրանի սեզոն է գալիս, թե բա՝ ծիրանն էլ կփակենք, տո ջհանդամին փակեք, ձեր արեւին փակեք: Մեր մոտ ծիրանը կէժանանա, ծիրանի արաղ կքաշենք:

- Դուք արաղով կուրախանաք, ծիրան մշակողները կլացեն էժան գնով ծիրանը վաճառելուց, ինքնարժեքն էլ չեն հանի:

- Եթե էդ մարդիկ չեն ընդունում իրանց երկիր, ի՞նչ անենք, մենք արդեն ուրիշ երկրի հետ ենք պայմանավորվում, ուրիշ երկիր կտանեն ծիրանը, երբ ամեն ինչը հանգուցալուծվի:

- Ո՞ր երկրի հետ եք պայմանավորվում:

- Հետո կիմանաք, բայց այդ մարդիկ էս փակելով են ուզում պադդերժկա անել ընդդիմությանը: Դուք չլսիք՝ ինչ ասեց Քոչարյանը, ասեց, որ 44-օրյա պատերազմի մեղավորը Հայաստանն է: Այսինքն, Ռուսաստանը չի, Հայաստանն է:

- Դուք եք Հայաստանը ղեկավարել պատերազմի շրջանում, ոչ թե Ռուսաստանը:

- 44-օրյա պատերազմը եղել է Ռուսաստանի, Թուրքիայի, Ադրբեջանի, Պակիստանի եւ իսրայելական տեխնիկայի շնորհիվ: Սրանք պադդերժկա են անում Քոչարյանին, որ նորից գա, ու սկսվի ռուսական հետողորմյա, 90 միլիոնով ինքը մոտ 5 մլրդ-ի ապրանք տվեց Ռուսաստանին:

- Դուք առանց գումարի Ադրբեջանին Արցախ տվեցիք: Այսօր էլ Պուտինը Նիկոլ Փաշինյանին է շնորհավորել ծննդյան առթիվ, հիմա կարո՞ղ ենք ասել, որ ձեզ է «պադդերժկա անում»:

- Նիկոլ Փաշինյանն էլ իր ծնունդն է շնորհավորել, դա ի՞նչ ասելու բան է, այսինքն, որ փակում են ճանապարհները, ոչ մի ապրանք չեն թողնում մտնի, դա մեծ աջակցությո՞ւն է մեզ:

- Դուք չե՞ք ընդունում, որ ձեր արտաքին քաղաքականության հետեւանքով է այդ ամենն արվում՝ մի կողմից ԵԱՏՄ կազմում եք, մյուս կողմից՝ խաղեր եք տալիս ԵՄ-ի հետ:

- Մենք խաղեր չենք տալիս, մեր արտաքին քաղաքականությունը մինչեւ օրս նման հաջողություն չի ունեցել, որ Ամերիկայի պետքարտուղարը Հնդկաստանից թռնի Հայաստան 4 ժամով, պայմանագրերը ստորագրի, գնա: Նման բան տեսե՞լ ես, կամ՝ ԱՄՆ նախագահը զանգի՝ Հանրապետության օրվա կապակցությամբ շնորհավորի ու ասի, որ Փաշինյանը մեր մեծ բարեկամն է:

- Դա մեզ ի՞նչ է տալիս, այդ խոսքերին գայթակղվում եք, բայց հողի վրա տնտեսությունը վարի է գնում, արտահանումը կանգնած է:

- Մենք կարող ենք մի տարի էլ ծիրանով ապրել, կուշտ կուտենք՝ թող չտանեն, մի տարուց հետո կտեսնեք, որ Ռուսաստանը կխնդրի, որ իրա երկիր ծիրան տանենք, պոմիդոր ու հատկապես՝ վարունգ. վարունգի առաջարկը շատ է:

- Կարծում եք՝ հունիսի 8-ից այդ ամենը կդադարի՞:

- Շատ ճիշտ հարց էր, ուրեմն պարտվելուց հետո ընդդիմությունը նոր պայքար է սկսելու, չէ՞ որ Ռուսաստանն ասաց՝ շարունակական է լինելու, այնպես չի, որ Փաշինյանը դարձավ վարչապետ, ամեն ինչ վերջացավ, ինքն արդեն մեսիջներ ուղարկել է, որ պատրաստ եղեք հետընտրական պայքարի: Դուք ավելի շատ եք կարդում իրենց, կիմանաք դրա մասին, ես չեմ էլ ուզում կարդամ, թող իրանց մուրազը փորները մնա:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՄԻԱՅՆ ԳԱԶԱՎՈՐՎԱԾ ՀՅՈՒԹ ԵՆ ԱՐՏԱՀԱՆԵԼ

Ռուսաստանը թույլ չի տալիս Հայաստանից մի շարք ապրանքատեսակների մուտքն իր տարածք: ՌԴ ապրանք տեղափոխող բեռնատարի վարորդ **Հայկ Գրիգորյանը** նշեց, որ ֆուռերի սեփականատերերը, խնդիրներից խուսափելու համար, վերջին օրերին նախընտրում են Հայաստանից որեւէ ապրանք չարտահանել, քանի որ չգիտեն, թե ինչ խնդիրների կարող են բախվել. «Բոլորս էլ հասկանում ենք, որ առավելագույն եկամուտ ապահովելու համար մեզ ձեռնտու է, որ երկկողմանի փոխադրում իրականացնենք, այսինքն՝ Հայաստանից X ապրանք տանենք Ռուսաստան, բեռնաթափենք եւ Ռուսաստանից մեկ այլ ապրանք բեռնենք ու բերենք Հայաստան՝ մեկ անգամ գնալ-գալու ընթացքում կրկնակի աշխատելով, բայց հիմա նման ռիսկի չենք գնում: Հայաստանից ամեն ինչ արտահանելը կարող է պրոբլեմատիկ լինել: Հայ-վրացական սահմանն անարգել անցնում ենք, Վրաստան-Ռուսաստան սահմանի վրացական կողմն անցնում ենք, իսկ Ռուսաստանի անցակետում ամեն ինչ խնդիր է: Հայաստանից գնացող մեքենաների 99 տոկոսն ուղարկում են խոր զննման, հետո ուղարկում են Չմի գյուղի կայանատեղի, որտեղ օրերով, անգամ ամիսներով սպասում ենք ու վերջում չգիտենք՝ թողնելո՞ւ են, թե՝ ոչ: Ընդ որում՝ այդ կայանատեղիի համար օրը 2 հազար ռուբլի գումար ենք վճարում: Հնարավոր է 20 օր հետո ասեն՝ բեռը չենք ընդունում, ու հետ ուղարկեն, եւ ռուսական սահման հասած բեռների 99 տոկոսի դեպքում հենց այդպես էլ լինում է»: Ի՞նչ պատճառաբանությամբ են արգելում բեռի մուտքը Ռուսաստան: «Ամենատարբեր՝ փոքր թերությունից սկսած, մինչեւ ուղիղ տեքստով ասել, որ եթե ուզում ես իմանալ՝ ինչի ենք մերժում, գնա Փաշինյանին հարցրա: Դեպք ունենք, որ սառնարան բեռնախցիկով ֆուռի արտաքին մասում փոքր հատված ժանգոտված էր, որը բացառապես արտաքինից էր ու որեւէ խնդիր չէր կարող առաջացնել բեռի հետ, բայց բեռը հետ ուղարկեցին»:

Այս պահին Հայաստանից արտահանման լուրջ խնդիրներ կան պտուղ-բանջարեղենի, հատկապես՝ ելակի հետ կապված: Բացարձակ արգելված է կոնյակի, ջերմուկի, գարեջրի ներմուծումը Ռուսաստան. «Սահմանափակումներ կան՝ կապված ձկան, ծաղիկի, ՀՀ-ում արտադրված էներգետիկ ըմպելիքների, ջրի, ալյումինե ֆոլգաների, տրավերտինից քարե սալիկների ՌԴ ներմուծման հետ»: Մենք կապվեցինք մի քանի խոշոր արտահանող ընկերությունների հետ, որոնք նշեցին, որ գյուղատնտեսական ապրանքներ այս պահին չեն արտահանում: Լոգիստիկ «Դավիան գրուպ» ՍՊԸ-ից ասացին, որ վերջին օրերին միայն գազավորված հյութ են արտահանել, որի հետ կապված խնդիր չեն ունեցել, իսկ գյուղապրանքներ չեն արտահանում:

Մոսկվայի եւ մերձմոսկովյան հայ համայնքների ղեկավար **Արտյոմ Վարդանյանը** մեզ հետ զրույցում նշեց. «Արտահանման սահմանափակումը լուրջ խնդիր է ՀՀ թե՛ արտահանողների եւ թե՛ արտադրողների համար: Արդեն իսկ հայկական մթերքների պակաս կա՝ խանութներում ջերմուկ, հայկական ոգելից խմիչքներ, բանջարեղեն արդեն չկան»:



Արմինե ՆԱՎՈՅԱՆ

ԱՐՏԱՀԱՅՈՒՄ

ԵԹԵ ՀԱՅԿԱԿԱՆ ԾԻՐԱՆԸ ՉԳԱ ՌԴ, ԿԳԱ ՈՒԶԲԵԿՍՏԱՆԻՑ ԿԱՄ ԱՅԼ ԵՐԿՐԻՑ

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանի պաշտոնանկության շուրջ լուրերի վերաբերյալ մայիսի 28-ին Ռուսաստանի հայերի միության եւ Ռուսաստանի հայկական ազգային-մշակութային միավորումների տարածաշրջանային մասնաճյուղերի ղեկավարների կողմից հայտարարություն է տարածվել. «Մենք՝ Ռուսաստանի հայերի միության եւ Ռուսաստանի Դաշնության հայկական ազգային-մշակութային միավորումների տարածաշրջանային մասնաճյուղերի ղեկավարներս, տարակուսանք ենք հայտնում հայ-ռուսական տեղեկատվական դաշտում Ռուսաստանի հայերի միության (ՌՀՄ) վերաբերյալ շրջանառվող լուրերի վերաբերյալ՝ կազմակերպության նախագահին «փոխարինելու» ենթադրյալ որոշման վերաբերյալ»: Թեմայի շուրջ զրուցել ենք Մոսկվայի եւ մերձմոսկովյան հայ համայնքների ղեկավար **Արտյոմ Վարդանյանի** հետ:

- Այս պահին ինչո՞վ էր հրատապ նման հայտարարություն տարածելը:

- Հայտարարությունը եղել է ՌԴ-ում համապատասխան ռեգիոնների ղեկավարների կողմից՝ իրենց իսկ ցանկությամբ, ժողովի ժամանակ որոշում են կայացրել այն հարցի մասին, որը շուրջ 2 ամիս արծարծվում է ու անընդհատ տարբեր լրատվականներում քննարկվում է: Բնականաբար, մարդկանց մոտ հարցեր են ծագում, թե ինչի համար է այս հարցն արծարծվում, եթե իրականում չկա ոչ մի կրակ: Հայտարարության մեջ շեշտ է դրվել, որ Հայերի միության նախագահն ընտրվել է 2025թ. սեպտեմբերի 7-ին՝ 5 տարի ժամկետով, եւ նման խոսակցություններն անտեղի են, եւ մենք օրնիբուն շարունակում ենք աշխատել միասնական: Բնականաբար, այս հայտարարությունը կարեւոր է, քանի որ պետք է հաշվի առնել մի փաստ, որ դա միայն կառույցը չէ, կառույցն իր մեջ ներառում է մի ամբողջ համայնք, իսկ համայնքի բնակչությանը գցել թյուրիմացության մեջ, որ կան փոփոխություններ, ճիշտ չէ: Այդ պատճառով կարծում եմ, որ ճիշտ են արել համայնքների ղեկավարները՝ նման հայտարարություն անելով:

- Արա Աբրահամյանի պաշտոնանկության մասին քննարկումներում անգամ փոխարինողների անուններ էին շրջանառվում: Արդյոք այս հարցը չի՞ քննարկվել:

- Մենք աշխատում ենք բնականոն ռեժիմով, մեր կառույցում նման հարց չի քննարկվում, իսկ այլ հարթակներում թե ովքեր ինչ հարցեր են քննարկում, դա մեզ չի վերաբերում:

- Ռուսաստանը Հայաստանից մի շարք ապրանքների արտահանման սահմանափակումներ է կիրառել: Ռուսական շուկայում այդ բացը չի՞ երեւում:

- Արտահանման սահմանափակումը լուրջ խնդիր է թե՛ արտահանողների եւ թե՛ արտադրողների համար: Արդեն իսկ այստեղ մենք շոշափում ենք այն փաստը, որ հայկական մթերքների պակաս կա: Խանութներում ջերմուկ, հայկական ոգելից խմիչքներ, բանջարեղեն արդեն իսկ չկան:

- Հայկական ապրանքների պահանջարկը մեծ է ռուսական շուկայում:

- Հայաստանից արտահանվող միրգ-բանջարեղենի 93 տոկոսը սպառվում է Ռուսաստանի տարածքում, բնականաբար, պահանջը կա, նույնը՝ խմիչքների ու ջերմուկի մասով: Բայց չկա որեւէ ապրանքանմուշ, որ Ռուսաստանի Դաշնությունը ներկրման խնդիր ունենա: Օրինակ՝ եթե հայկական ծիրանը չգա ՌԴ, բնականաբար, կգա Ուզբեկստանից կամ այլ երկրից, այսինքն՝ դրա տեղը կլրացվի: Այո, հայկական ծիրանը շատ լավն է, բայց եթե չկա, կան փոխարինողները: Նույնը կարող ենք ասել ցանկացած ապրանքի մասով: Այստեղ խնդիրը հայ արտադրողի համար է: Ես կարծում եմ, որ նախընտրական շրջանից հետո կերեւա այս հարցի լուծման ուղին, այլապես շատ վատ հետեւանքներ կունենա Հայաստանի էկոնոմիկայի վրա:

- ՀՀ իշխանությունները շրջանառում են այն թեզը, որ այս սահմանափակումներով ՌԴ-ն փորձում է իրենց վարկանիշի վրա ազդել՝ այդպիսով աջակցելով ընդդիմադիր ուժերին, եւ սահմանափակումները հունիսի 8-ից հետո կվերացվեն:

- Չեմ կարծում, որ պետք է հունիսի 8-ը որեւէ ձեւ կապել սահմանափակումների հետ, քանի որ իշխանություններն ուղիղ տեքստով արտահայտվեցին եւ ասացին, որ խնդիրը կապված է նրա հետ, որ Հայաստանի իշխանությունները, Եվրասիական միության անդամ լինելով հանդերձ, փորձում են իրենց վեկտորը փոխել դեպի Եվրոպական Միություն: Սա ասվել է ուղիղ տեքստով, եւ այստեղ ընտրությունների հետ կապված որեւէ հարց չկա:

- Վլադիմիր Պուտինը շնորհավորել է Նիկոլ Փաշինյանին՝ ծննդյան առթիվ, կողմերը հեռախոսազրույց ունեցել. սա կարելի՞ է ցուցիչ համարել հայ-ռուսական հարաբերությունների համար, թե՞ դիտարկենք արարողակարգային տիրույթում:

- Տա Աստված, որ ամեն ինչ լավ լինի, սփյուռքում ապրող յուրաքանչյուր հայի համար իր պատմական հայրենիքի ամենօրյա լավ լինելը կարեւոր է: Ես չեմ կարող անձնային հարաբերությունների վերաբերյալ հարցերին պատասխանել, իսկ պետական հարաբերությունների վիճակը մենք տեսնում ենք անկախ նրանից, թե ինչպես են փորձում կոծկել:

- Եթե Հայաստանի իշխանությունները շարժվեն իրենց որդեգրած քաղաքականությամբ, դրա հետեւանքով Ռուսաստանում ապրող հայերն ինչ խնդիրների կարող են բախվել:

- Ուղիղ տեքստով Ռուսաստանի պատկան մարմինները հայտարարեցին այն մասին, որ ՀՀ քաղաքացիները, որոնք բնակվում են Ռուսաստանում, ստիպված կլինեն պատենտ ձեռք բերել, որպեսզի կարողանան աշխատել, այսինքն՝ կլինեն միգրանտի կարգավիճակով, որն արդեն իսկ խնդիր է: Իսկ ՌԴ քաղաքացի ազգությամբ հայերը, կարծում եմ, չպիտի ունենան նմանատիպ խնդիրներ:

- Լուրեր են շրջանառվում նաեւ, որ 300 հազար հայի Ռուսաստանը պատրաստվում է դեպորտ անել: Այս մասով ինչ է Ձեզ հայտնի:

- Այն, որ մենք ունենք համապատասխան օրենք՝ ՌԴ-ում միգրացիայի հետ կապված, դա բնական է, որ ցանկացած այլ երկրի քաղաքացի պետք է հետեւի այդ օրենքներին: Եթե տրված է, որ 90-օրյա ժամկետում պետք է լքի, ուրեմն պետք է լքի, իսկ դեպորտների հետ կապված կարող եմ ասել, որ համատարած այս պահին նման բան գոյություն չունի: Մարդիկ, ովքեր խախտել են օրենքը մի քանի անգամ եւ օրենսդրության համաձայն պետք է դեպորտիզացիայի ենթարկվեն, ենթարկվում են, չի կարելի դա վերագրել համընդհանուր իրավիճակի եւ վերագրել հայ ազգին: Թերեւս, առայժմ նման բան գոյություն չունի:

- Հունիսի 7-իընտրության շեմին նկատվում է Ռուսաստանից քաղաքացիների հոսք: Ընտրության նպատակով ՀՀ եկող քաղաքացիները մեծ թիվ են կազմում:

- Մենք չենք կարող գնահատական տալ այն փաստին, թե նախորդ տարվա համեմատ Ռուսաստանից որքան հայեր են Հայաստան գնում: Շրջապատում կան մարդիկ, ովքեր գնում են հանգստանալու, կան, որ, այո, գնում են իրենց ընտրական պարտքը կատարելու: Տարբեր առիթներով մարդիկ գնում են, իսկ որ ասում են՝ համընդհանուր բնույթ է կրում, ես նման տեղեկություն չունեմ:

ԵՍ ՉԵՄ ՀԻՇՈՒՄ 8 ՏԱՐՈՒՄ ՈՐԵՎԻՑԵ ԼՈՒՐՋ ՔԱՅԼ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿՈՂՄԻՑ՝ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հարցազրույց արտակարգ եւ լիազոր դեսպան **Լեւոն Մարտիրոսյանի** հետ:

- ՀՀ-ում ՌԴ դեսպանն օրերս կանչվել է Մոսկվա՝ ԵՄ-ի հետ մերձեցման ուղղությամբ ՀՀ ղեկավարության քայլերի վերաբերյալ կոնսուլտացիաների: Այդ մասին հայտնել են ՌԴ ԱԳՆ-ից: Դիվանագիտական տեսանկյունից ինչ է սա նշանակում: Կան տեսակետներ, որ Ռուսաստանն այս քայլով դեղին քարտ է ցույց տալիս Հայաստանին:

- Ես այս հարցի վերաբերյալ ունեմ օրիգինալ կարծիք: Ինձ համար ակնհայտ է, որ Հայաստանն ու Ռուսաստանը բավականին լավ հարաբերություններ ունեն, եւ մի տեսակ արհեստածին է այս ամբողջ աժիոտաժը՝ հայ-ռուսական հարաբերությունների համատեքստում: Հայաստանը, դժբախտաբար կամ բարեբախտաբար, ՌԴ-ից կախված երկիր է թե՛ քաղաքական եւ թե՛ տնտեսական առումներով: Ռուսաստանն ունի բոլոր լծակները՝ Հայաստանում ցանկացած փոփոխություն մտցնելու համար, եթե ունենա այդպիսի ցանկություն, եւ քանի որ նման փոփոխություններ տեղի չեն ունենում, մենք պետք է եզրակացնենք, որ ՌԴ-ն ցանկություն չունի փոփոխություններ անելու:

- Այդ դեպքում Պուտինի հայտարարություններն այն մասին, որ Հայաստանը պետք է հանրաքվե անցկացնի եւ կողմնորոշվի՝ ԵԱՏՄ, թե ԵՄ, ինչի՞ համար են:

- Հայաստանը չպետք է կողմնորոշվի այդ հարցում, որովհետեւ Հայաստանը ԵՄ անդամ չի դառնում, անգամ ԵՄ թեկնածուի հայտ չի ներկայացրել, ի դեպ, դա նույնպես կարգավիճակ է, եւ Հայաստանը չի դիմել ոչ ԵՄ անդամակցության եւ ոչ էլ անգամ թեկնածության համար: Հայաստանը չի համապատասխանում գրեթե ոչ մի չափանիշի՝ ԵՄ անդամ դառնալու համար, Հայաստանը եվրոպական արժեքների տեսանկյունից բավականին հեռու է, հեռու է ժողովրդավարական, իրավական պետություն լինելուց, իսկ դրանք առանցքային չափանիշներ են՝ Եվրոպական Միության նույնիսկ անդամի թեկնածու լինելու համար: Այնպես որ, չեմ կարծում, թե Հայաստանը գոնե առաջիկայում կարող է մոտենալ պահանջված չափանիշներին: Հետեւաբար, այս քննարկումներն անիմաստ են, եւ չարժե երկար-բարակ մտավարժանքներ անել դրանց մասին:

- ՌԴ նախագահը, սակայն, պնդում է, որ Հայաստանը պետք է հանրաքվե անցկացնի, անկախ այն բանից, որ մենք շատ հեռու ենք ԵՄ անդամ լինելուց:

- Բայց Հայաստանը դուրս չի գալիս ԵԱՏՄ-ից եւ առնվազն առաջիկայում չի կարող ԵՄ անդամ դառնալ, հետեւաբար, ինչի՞ մասին է լինելու այդ հանրաքվեն, այն մասին, որ մենք ԵՄ որեւէ չափանիշի չենք համապատասխանում:

- Եթե հանրաքվե լինի, հանրության ոչ գրագետ զանգվածի համար կունենամ նշանակություն այն հանգամանքը, որ Հայաստանը միլիոնավոր մղոններով հեռու է ԵՄ անդամ դառնալուց:

- Եվրասիական տնտեսական միության անդամ ենք մենք պաշտոնապես: Ոչ գրագետ խավը չի որոշում դա, որոշողը պետությունն է: Հանրաքվեի իմաստ չկա:

- Իսկ Ռուսաստանը չի՞ կարող Հայաստանից ապահարզան պահանջել, առանց Հայաստանի կարծիքի հետ հաշվի նստելու:

- Կարող է, բայց դրա համար պետք չէ հանրաքվե: Ռուսաստանը դա կարող է անել, այո, մենք զրույցը սկսեցինք հենց այդտեղից, որ Ռուսաստանն ունի բոլոր հնարավոր լծակները, բայց քանի որ ոչինչ չի անում, եզրակացությունը պետք է թողնել այդ մակարդակի վրա:

- Այդ պարագայում ինչո՞ւ են Հայաստանում ՌԴ դեսպանին կանչել խորհրդակցության:

- Դեսպան կանչելը մեծ խնդիր չէ: Անգամ ամենաբարեկամ երկրները երբեմն կարող են դեսպաններին կանչել եւ խորհրդակցություն անցկացնել: Դա ծանր խնդիր չէ:

- Ի՞նչ դրսեւորումներ են հարկավոր, որպեսզի հասկանանք՝ դիվանագիտական տեսանկյունից դեղին քարտ են Հայաստանին ցույց տալիս:

- Եթե խոսքը ՌԴ-ի եւ Հայաստանի օրվա իշխանությունների «հակամարտության» մասին է, ապա Նիկոլ Փաշինյանն արդեն ութ տարի է՝ իշխանություն է, եւ ես չեմ հիշում որեւիցե լուրջ քայլ Ռուսաստանի կողմից՝ օրվա իշխանության դեմ: Եթե կա մեկը, որ հիշում է, թող ինձ հիշեցնի:

- Հայաստանում տեւական ժամանակ է՝ ԱՄՆ դեսպան չի նշանակվում: Սա նորմա՞լ է:

- Որեւէ լուրջ խնդիր չկա, դա ընդամենը ընթացակարգային խնդիր է:

ՇՈՒՆՉ

ՊԱՊՆ ՈՒ ԹՈՌԸ (ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ)

Ա՛յ բիձե՛ք, հլա եկեք ստեղ, բան եմ ասում: «Բիձա» բառից էլ չնեղվեք, որովհետեւ մի բիձա էլ ես եմ՝ ձեր օրին, ու դեռ երեւի ձեզնից էլ ավելի վատ օրի: Եկեք մի քիչ զրից անենք մեր գլխին գալիքի մասին: Չեմ ասում՝ մեր ապագայի, որովհետեւ մեզ քիչ ժամանակ է մնացել, իսկ էդ անտեր ապագան ամեն օր չէ, որ գալիս է: Տարիներով պիտի սպասես…

Եվ, ուրեմն, մեր երկրում իշխանափոխության ամենամեծ պրոբլեմը մենք ենք համարվում: Դա գիտեն թե՛ ընդդիմադիրները եւ թե՛ իշխանությունները: Ընդդիմադիրները մտածում են, որ մենք 10 հազարով բարձրացած թոշակի ու «քեշբեքի» սիրուն, ձայն ենք տալու Նիկոլին, Նիկոլն էլ մտածում է՝ ոնց անի, որ մենք չգնանք ընտրությունների ու սխալմամբ՝ քոռ-քոռ ուրիշ քվեաթերթիկ չդնենք ծրարի մեջ: Իսկ մենք քիչ չենք, մոտ 600 հազար, ինչը լիուլի բավարար է ընտրություններում նժարն այս կամ այն կողմ թեքելու համար: Այսինքն՝ մենք իսկապես պրոբլեմատիկ ենք, բայց դրա հետ մեկտեղ պատասխանատու՝ ընտրությունների ելքի, հետեւաբար՝ նաեւ երկրի ապագայի համար:

Հիմա ուշադիր լսեք: Թոշակառու լինելուց առաջ մենք հայ ենք, ճի՞շտ է: Դե ուրեմն էլ խաղեր չտաք Նիկոլի հայատյաց քարոզիչների առաջ, երբ նրանք սկսեն ձեր երեսով տալ թոշակների 10 հազարով բարձրացումն ու քեշբեքը: Անձամբ ես, երբ մեր տուն որեւէ ՔՊ-շնիկ է գալիս, օրինակ, սոցապի Արսենը, եւ սկսում է քարոզել, թե տեսա՞ր Նիկոլը ոնց բարձրացրեց թոշակները, ես նրան ասում եմ (հո պառավ-մառավ չկա՞մ լսող)՝ ս..րդ քաշի, գնա, էլ այստեղ չերեւաս: Ու թող փորձի դրանից հետո հակաճառել՝ 10 հազար, քեշբեք… Չեք ամաչո՞ւմ, արա, 10 հազար փող եք տվել՝ դարձրել Հոռոմի էն իքը… Էն էլ իսկի չեք տվել: Քարտի վրա թիվ եք նկարում, հետո այդ թիվը 2 օրում տանում ինձնից: Դուք խանութ մտնո՞ւմ եք, գները տեսնո՞ւմ եք: Հացը, որ 180 դրամ էր, այսօր 270-300-ով եմ առնում, միսը, կարագը, պանիրը, կաթը, ձուն… Ո՞ր մեկն ասեմ: Տո այ ուռոդ, երեխեն դրսից մի երկու կոպեկ է ուղարկում, դա էլ եք ձեռքիցս տանում ձեր սահմանած դոլարի կուրսով: Դոլարը 500-ից իջեցրել եք 360 դրամ: Ամեն մի դոլարի մեջ 140 դրամ թալանում եք ու դեռ քեշբեքի՞ց եք խոսում: Հը, բիձեք, բոլորիդ մոտ էլ նույն վիճակն է, չէ՞: Բա էլ ինչո՞ւ եք այդ 10 հազարի համար կպել Նիկոլի… Հիմա ասել էի՝ որ տեղերից: Մոռացա էլ հարցնեմ՝ Լառնակա գնացող եղմ՞ ձեզնից: Չի հերիքո՞ւմ… ո՞վ է մեղավոր:

- Ուստա Համո, հլա դու խոսիր, պատմիր, թե ինչքանով է բարձրացել կենսամակարդակդ:

- Կենսամակարդակս չգիտեմ, բայց տարիքս բարձրացել ա, դառա 65, ձրի բուժում, բան-ման:

- Յա՜մա՜… Տղերք, լսեցի՞ք ինչ ասաց ուստա Համոն:

- Հա դե էշ-էշ խոսում է, էլի: Տո այ Համո, վերջին անգամ մեզդ ե՞րբ ես տարել անալիզի, ձրի՞ էր…

Տղերք ջան, կռիվ մի արեք իզուր: Լսեք, թե ինչ եմ ասում: Ով դեռ 65 չկա, թող չշտապի: 65-ի հետ կապված այդ ամեն ինչը (պառավ-մառավ չկա, չէ՞) ջեբտռոցի է: Ես սա ձեզ ասում եմ որպես 65-ի շեմին կանգնած եւ հայ-հայ է ներս մտնող թոշակառու: Ձրի բանը, դուք ինձնից լավ գիտեք, թակարդի մեջ է լինում միայն… Մանավանդ՝ ընտրությունների նախօրյակին: ԲԿ-ներն արդեն բունտ են անում 65 տարեկան մարդ տեսնելիս: Բժիշկների ժամը չի հերիքում, աշխատավարձերը նվազել են, դեղի շուկան պայթել է, գները թռել են երկինք… Մեզ ոչ ոք չի սիրում արդեն, բոլորին թվում է, թե իրենց հաշվին ենք մենք «ձրի» բուժում ստանում ու «ձրի» դեղ: Բոլորդ էլ գիտեք, որ գրիմրի հետ ես մի քիչ սեր ունեմ: Անահիտ Ավանեսյանին գրեցի՝ տիկին, ի՞նչ հաշվարկներ կան այս օյինբազության տակ, ձրի՝ այսինքն ձրի՞, թե՞ էլի մի բան մոգոնել եք քարոզչական նպատակներով: Գիտե՞ք, թե ինձ ինչ պատասխանեցին: Ինձ ասին՝ Անահիտ Ավանեսյանն արձակուրդ է, Նիկոլի հետ գնացել է քարոզարշավի՝ սրտիկ-մրտիկ անելու: Արսեն Թորոսյանին դիմեցի: Նա էլ տեղում չէր, բայց տարածքում էր եւ հասցրեց տրտնջալ մեզնից, թե երկար ենք ապրում, բեռը մեծ է, ֆլան-ֆստան: Բայց երբ զոռեցի, իրեն կորցրեց. «Դուք խի՞ եք այդքան երկար ապրում, արա, դուք ընդհանրապես խի՞ եք կենդանի…»:

- Էդ խոսքերը Նիկոլն ա ասել…

Ի՞նչ տարբերություն, ուստա Համո, թե ով ա ասել: Նույնն են՝ Նիկոլ, Արսեն Թորոսյան, Անահիտ Ավանեսյան… Դաժե Ալեն Սիմոնյանն ու Ռուբեն Ռուբինյանն են Նիկոլ, որոնք դեռ շատ հեռու են 65-ից:

Ուստա Համոն, թե՝ ասածդ ի՞նչ ա, գնանք նախկինների՞ն ձեն տանք…

- Համո, ես քեզ չեմ ասում՝ գնա, նախկիններին ձայն տուր: Ես ասում եմ՝ սրանք 10 հազարով թոշակդ բարձրացրել են, բայց 20 հազար են քերթում արդեն, 65-երի բուժումը «ձրի» են դարձրել, որ այնքան վազես բժշկի, մինչեւ հերթի մեջ մեռնես ու 66 չդառնաս:

Ինչեւէ, բիձեք, առաջարկում եմ թոշակի թեման փակենք: Իշխանափոխությունից, այսինքն `ՔՊ-ին ռադ անելուց հետո ոչ մի նոր իշխանություն ձեր 10 հազարները չի խլի ձեզնից: Սա հաստատ իմացեք: Ավելին ասեմ՝ ընդդիմադիր առնվազն 3 ուժ խոստացել է ոչ միայն բարձրացնել թոշակը, այլեւ ինդեքսավորել, ինչը նշանակում է, որ գների թռիչքը չի ազդի մեր՝ թոշակառուներիս կենսամակարդակի եւ, առհասարակ, մակարդակի վրա: Մինչդեռ Նիկոլի կողմից թոշակների հաջորդ բարձրացմանը ստիպված ենք լինելու երկար, շատ երկար սպասել:

Դե իսկ հիմա՝ կարեւորի մասին: Ձեր մեջ մարդ կա՞մ, որ բերկրանք չի ապրում, երբ իր թոշակից մի բան է առնում թոռան համար՝ գրիչ, տետր, քաղցր… Իմացեք, ուրեմն, որ այս ընտրությունները ոչ թե մեր մասին են, այլ մեր երեխաների եւ թոռների, որ դեռ շատ ճանապարհ ունեն անցնելու՝ մինչեւ պապիկ-տատիկ դառնալը: Այս ընտրությունները ոչ թե մեր թոշակի չափի, այլ մեր երեխաների ու թոռների՝ հայրենիք ունենալու, իրենց տանն ապրելու իրավունքի մասին են: Ո՞նց է մեր կոկորդով կուլ գնալու այն 10 հազար դրամը, որ շպրտել են մեզ՝ մեր երեխաների ու թոռների հայրենիքը, տունը, ապագան մեր ձեռքով խլելու համար: Կներեք ինձ, բիձեք ջան, բայց ես, որ մի ոտս այստեղ է, մյուսը՝ այնտեղ, չեմ կարող իմ կոտրած ձեռքով քվե տալ խաբեբաների, աֆերիստների եւ օտարների այս իշխանությանը:

Հասկացա՞նք իրար…

ՀԳ. *Այսօր, վաղը հունիսի թոշակը կնստի քարտերին: Դա մեր հալալ քրտինքն է եւ ոչ թե Նիկոլի բարեգթության արգասիքը: Եվ, ուրեմն, հունիսի 7-ին, թոռնիկի ձեռքից բռնած, դուրս ենք գալիս տնից, գնում ընտրատեղամաս եւ ընտրում մեր թոռնիկի համար: Դե իսկ վերադարձին… վերադարձին արեք այն, ինչ պապութոռան մտքով կանցնի:*

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ԱՆԻՐԱԿԱՆ ՀՈՒՅՍԻ ՇՈՂ

Թույլ, աննշան, բայց այնուամենայնիվ հույսի մի շող է երեւում, որ նույնիսկ Նիկոլ Փաշինյանն է սկսել հասկանալ, որ իր հեռանալն այլընտրանք չունի: Հնարավոր է, որ նա իր հեռացման համար ճանապարհ է հարթում, ինքն իրեն համոզում, որ այդպես ավելի լավ կլինի ոչ միայն երկրի, ժողովրդի, այլեւ հենց իր համար: Նախորդ օրը՝ քարոզարշավի ժամանակ նա խոսել է ընտրություններում իր պարտության մասին. «Քանի ես վարչապետ եմ, Հայաստանի Հանրապետությունում որեւէ ընտրությամբ, որեւէ քվեաթերթիկ չի կեղծվելու: Ես ուղիղ ասում եմ՝ եթե ժողովուրդն այս ընտրությունների արդյունքներով որոշի, որ ես պետք է թողնեմ հեռանամ, ես սուսուփուս, խոնարհությամբ, շնորհակալությամբ կթողնեմ եւ կհեռանամ»: Իհարկե, սա կարելի է համարել դեմագոգիա՝ ժողովրդավար լինելու կեղծ խաղ մի մարդու կողմից, որի հրահանգով հարյուրավոր մարդիկ են կեղծ մեղադրանքներով կալանավորվում: Հնարավոր է, որ նա սկսել է գիտակցել, թե ինչ աղետալի հետեւանքներ կարող է ունենալ իշխանությունից կառչած մնալը. եթե նույնիսկ հաջողվի պահել այն, ապա դա տեւելու է ընդամենը մի քանի ամիս, ամենաշատը՝ մինչեւ տարեվերջ, եւ այդ ժամանակ ինքը ոչ թե խոնարհությամբ է թողնելու գնա, այլ իրեն քշելու է սոված ու ցրտի մատնված ամբոխը:

Անկախ նրանից, թե ինչ է մտածում Փաշինյանը՝ դեմագոգիայով է զբաղվում, թե իսկապես մտքին կա՝ հեռանալ, եկեք մի պահ պատկերացնենք, թե ինչ տեղի կունենա Հայաստանում հունիսի 7-ից հետո, եթե նրան հաջողվի մնալ իշխանության ղեկին, եթե կեղծի ընտրության արդյունքները եւ ռեպրեսիվ մեքենայի միջոցով ճնշի դժգոհության ալիքը, մարդկանց կալանավորելու կամ նույնիսկ կյանքի գնով: Փաշինյանը բոլորից լավ գիտի, որ Հայաստանի տնտեսությունը գտնվում է սոսկալի վատ վիճակում, բյուջետային մուտքերը չեն բավարարելու իր նախընտրական պոպուլիզմը սպասարկելու համար. բարձրացված թոշակները, առողջապահական ապահովագրությունը, գյուղվարկերի սուբսիդավորումը եւ նման այլ նախընտրական ընտրակաշառքները լավ են նախընտրական շրջանում, բայց հետընտրականում ծանր բեռ են դառնալու բյուջեի համար: Այսօր արդեն տեսանելի է, որ ծախսերը ֆինանսավորելու համար եղած փողը չի բավարարում, իրենք ստիպված մեծացնում են պետական պարտքը, դիմում են տարբեր միջազգային ֆինանսական հաստատությունների, վաղն ավելի վատ է լինելու, փող չի լինելու, պարտքով փող տվող՝ եւս:

Ռուսաստանը չի հրաժարվելու պատժամիջոցներից, Ռուսաստանի համար որեւէ տարբերություն չկա՝ ծիրանը, խաղողը, սալորը կամ դեղձը Հայաստանի՞ց է ներմուծում, թե՞ Ուզբեկստանից, ծաղիկը Հայաստանի՞ աճեցրածն է, թե՞ Հոլանդիայի ու Էկվադորի, հանքային ջրերի ու ոգելից խմիչքների տասնյակ արտադրողներ կան ՌԴ-ում, որոնք միայն ուրախ են, որ մրցակից հայկական ընկերությունները դուրս են մղվում տեղական շուկայից, էլ չեմ խոսում Վրաստանի եւ Ադրբեջանի մասին, որոնք նույնպես հայկական արտադրողի մրցակիցներն են: Հազարավոր ընկերություններ սնանկանալու են, տասնյակ հազարավոր մարդիկ մնալու են անգործ, անեկամուտ, աղքատությունը եւ սոցիալական լարումը հասնելու են աննախադեպ չափերի: Եվ դա՝ շատ արագ, ընդամենը մի քանի ամսվա ընթացքում: Վերջին հարվածը կարող է լինել գազի գնի թանկացումը, Ռուսաստանը ցանկացած պահի կարող է թանկացնել. հիմա չի անում, որովհետեւ իմաստ չունի, հիմա գազի եւ հոսանքի սպառումն այդքան մեծ չէ, էներգիայի այլ աղբյուրներ կան: Այդ «նվերը» պահել են ձմռան համար՝ նոյեմբերին կամ դեկտեմբերին, երբ գազի սպառումը հասնում է առավելագույնի: Ճիշտ է՝ Նիկոլ Փաշինյանը եւ Դանիել Իոաննիսյանը կարող են ազգայնացնել՝ իրենցով անել «Գազպրոմ Արմենիան»՝ այնպես, ինչպես վարվել են ՀԷՑ-ի հետ, բայց դրանից գազը չի էժանանա, այն ուղղակի կանհետանա, Ռուսաստանը կդադարեցնի գազի մատակարարումը: Այլընտրանքային գազ կարող է գալ միայն Ադրբեջանից. «գազ՝ Սյունիքի կամ Գեղարքունիքի դիմաց» սխեմայով: Իոաննիսյանը կհայտարարի՝ մենք չենք կարող Ռուսաստանին զիջել մեր ինքնիշխանությունը, ավելի լավ է զիջենք Սեւանը կամ Սյունիքը եւ փրկենք մեր ժողովրդին ցրտահարությունից:

Եթե Փաշինյանը վերջնականապես չի խզել կապը բանականության հետ, իսկ կարծում եմ՝ դա տեղի չի ունեցել, ապա նա հասկանում է, թե իրականում ինչ է սպասվում Հայաստանին՝ իր կողմից իշխանությունը հերթական անգամ բռնազավթելու դեպքում: Եվ ոչ մի ԱՄՆ ու ԵՄ իրեն չեն օգնելու, չեն օգնելու ոչ միայն փողով, այլեւ՝ շուկաներով, արտահանման այլընտրանք տալով: ԵՄ տարբեր երկրներում, այդ թվում՝ Ֆրանսիայում, տնտեսական աճի փոխարեն տնտեսական անկում է, եւ դրա հաղթահարման համար չկան նախադրյալներ, Եվրոպայում փող չկա սեփական կարիքների համար, ուր մնաց՝ ուրիշներին օգնի: Եթե ինքը կամավոր չգնա, չգնա հիմա, ապա հեռացվելու է ցնցումներով: Գուցե հենց դրա համար է հիմա խոսում կամավոր հեռանալու մասին:



Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԱՅՍԿՈՒՐԵՅՈՒՆ

Պատկերացնո՞ւմ եք, թե ինչքան անմխիթար է Փաշինյանի վիճակը, որ առաջիկա ընտրություններում նրան բացահայտ աջակցում են այնպիսի գործիչներ, համաշխարհային լիդերներ, որոնց գործունեությունն ուղեկցվել է սեփական ու այլ ժողովուրդների նկատմամբ բազում հանցանքներով, մարդկության դեմ կատարված եւ ռազմական հանցագործություններով, ապօրինություններով ու հակաժողովրդավարական վարքով:

ԱԼԻԵՎ, ԷՐԴՈՂԱՆ, ԹՐԱՄՓ, ԶԵԼԵՆՍԿԻ, ՍԱՀԱԿԱՇՎԻԼԻ. ՓԱՇԻՆՅԱՆԻՆ «ՀԱՆՑԱԳՈՐԾՆԵ՞ՐՆ» ԵՆ ՍԱՏԱՐՈՒՄ

Այսպես. Նիկոլի վերարտադրությունն ամեն ճիգով կազմակերպելու գործին լծված է հատկապես Ալիեւ-Էրդողան տանդեմը. հայության, Հայաստանին ու Արցախին անչափելի վնասներ պատճառած, հայ ժողովրդին թշնամի համարող եւ պարբերաբար հայատյաց հայտարարություններ անող այս երկգլուխ հրեշներից Թուրքիան՝ ի դեմս նախագահ Էրդողանի, մարդկայնորեն հրեշավոր ու ռազմականապես հանցավոր ծրագրեր ունի հարեւան երկրների, այդ թվում՝ Հայաստանի հետ կապված: Հիշենք թեկուզ, թերեւս, ոչ վաղ անցյալի դիպվածը՝ Սիրիա ներխուժումն ու Ասադի ռեժիմի տապալումը՝ իր տեղական դրածոների հանցավոր, այդ թվում՝ տեղի հայերի նկատմամբ կոտորածներ իրականացնելու միջոցով:

Այս թշնամական զույգի աջակցությունից զատ, Փաշինյանին ընտրություններում սատարելու մասին հայտնել են ԵՄ տարբեր գործիչներ եւ լիդերներ՝ դրանով Հայաստանին ներքաշելով հարյուրամյակների բարեկամ ու դաշնակից Ռուսաստանի հետ սուր առճակատման. Կրեմլն ամենաբարձր մակարդակով, այդ թվում՝ նաեւ նախագահ Վլադիմիր Պուտինի շուրթերով, մեղմ ասած, վերջնագիր է ներկայացրել ՀՀ իշխանություններին՝ նույն ԵՄ-ի հետ կապված ծրագրերի պատճառով: Չնայած Փաշինյանը հետ չի կանգնում երկիրը, սեփական ժողովրդին նոր փորձությունների եւ աղետների մատնելու հանցավոր արկածախնդրությունից: Փաշինյանին աջակցում է նաեւ Թրամփի վարչակազմը. նախ՝ պետքարտուղար Ռուբիոյի հայաստանյան կարճատեւ, բայց խիստ խորհրդանշական այցը տեղի ունեցավ, ապա Թրամփը հայտարարություն տարածեց՝ ուղիղ տեքստով աջակցելով նրան: Թրամփը, ի դեպ, վերջին հարցումներով ԱՄՆ-ի ամենացածր վարկանիշ ունեցող, ամենաանփառունակ ու ձախողված նախագահն է՝ առաջին հերթին Իրանի դեմ պատերազմի պատճառով: Նրա «սեւ գործերը», սակայն, միայն Հայաստանի հարեւան ու բարեկամ Իրանի մասով չեն սահմանափակվում. այս մարդն իսկական ռազմական հանցագործ է, որը կարող է մեկ գիշերվա մեջ որոշել հարվածել Թեհրանին, հարվածել Վենեսուելային, առեւանգել այդ երկրի նախագահին, սպառնալ զավթել Գրենլանդիան, սպառնալ, որ վենեսուելական սցենարը կրկնելու է Կուբայում եւ լատինամերիկյան մյուս երկրներում, «տնտեսական» պատերազմ հայտարարել Եվրոպային եւ աշխարհամասի մյուս երկրներին, որոնք իրեն «չեն ենթարկվում կամ աջակցում», հոխորտալ, թե Կանադան դարձնելու է ԱՄՆ հերթական նահանգ եւ այլն: Սակայն չմոռանանք, որ նա մեծապես աջակցում էր Հունգարիայի նախագահ Օրբանին, որը կատարելապես ձախողվեց ընտրություններում:

Պետք է աջակցել Հայաստանին. հայտարարել է նաեւ Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին, արձագանքելով Ռուսաստանի նախագահի այն խոսքերին, որ Հայաստանը կարող է բախվել «ուկրաինական սցենարին»՝ իր եվրաինտեգրման ձգտումների պատճառով: Մարդ, որն արդեն 4 տարուց ավելի սեփական երկիրն ու ժողովրդին ներքաշել է պատերազմի մեջ, սեփական իշխանությունը պահելու համար հրաժարվում է թեկուզ ցավոտ որոշումների գնով վերջ դնել արյունալի պատերազմին, հարյուր հազարավոր ուկրաինացիների մահվանն ու կեղեքմանը, որոշել է պաշտպանել ոչ թե Հայաստանին, այլ՝ Փաշինյանին, իր բախտակցին, նրան, որը հազարավոր հայորդիների կամովին նետեց թշնամու երախը, անամոթաբար ու անբարո կերպով հանձնեց Արցախը, ուրացավ ու արցախահայությանն իրեն «թշնամի» հռչակեց, Հայաստանն էլ մաս-մաս նվիրում է ադրբեջանցիներին: Եվ, ահա, Զելենսկին կոչ է արել ԵՄ-ին՝ ավելի շատ մտածել անվտանգության մասին եւ չլքել այն երկրների ժողովուրդներին, որոնք կարող են «տուժել Ռուսաստանի պատճառով»:

«Ռուսաստանի յուրաքանչյուր հարեւան լսել է Հայաստանի մասին խոսքերը, որի ժողովուրդն է միակը, որն իրավունք ունի եւ կընտրի իր երկրի ապագան: Եվ այն, ինչ Ռուսաստանն ասում է Հայաստանի մասին, վերաբերում է ոչ միայն Հայաստանին: Մենք՝ բոլորս, պետք է ավելի շատ մտածենք անվտանգության մասին, ավելի շատ համատեղ քայլեր ձեռնարկենք՝ ապահովելու, որ քաղաքական գործընկերությունները գործեն: Մենք պետք է ապահովենք, որ ոչ ոք կախված չլինի Ռուսաստանից, եւ նրանց չտանք գործիքներ՝ ժողովրդին շանտաժի ենթարկելու համար»,- հայտարարել է Ուկրաինայի ղեկավարը:

Փաշինյանին աջակցելու մասին հայտարարել է նաեւ սեփական ժողովրդին պատերազմի մեջ ներքաշելու, Վրաստանի տարածքի մի մասի կորստի, պետական եւ ռազմական հանցագործությունների մեջ մեղադրվող, կալանավայրում գտնվող Վրաստանի նախկին նախագահ Միխեիլ Սահակաշվիլին, որը ճաղերի ետեւից որոշել է դասեր տալ հայ ժողովրդին: Սամվել Կարապետյանը «հայ Իվանիշվիլին» է՝ Ֆեյսբուքում գրել է նա եւ հավելել. «Կարծում եմ՝ հայերը գիտեն, թե ինչ բերեց Իվանիշվիլին Վրաստան. կոռուպցիայի, հանցագործության, ազգային հարստության թալանի, զանգվածային քաղաքական բռնաճնշումների, սոցիալական ցանցերում խոսքի ազատության սահմանափակումների, միջազգային մեկուսացման եւ Մոսկվայի ստրկության վրա հիմնված բռնապետություն: Սիրելի՛ հայ հարեւաններ, սա է այն երկիրը, որը դուք ցանկանում եք: Մի՛ կրկնեք Վրաստանի սխալը, անկախ նրանից, թե որքան քննադատաբար եք մոտենում ներկայիս կառավարությանը: Վրաստանը նույնպես կորցրեց իր ռուսական գազի մատակարարումը, բայց այն գնեց մյուս հարեւաններից շատ ավելի էժան գնով: Հայաստանը կարող է նույնն անել: Այժմ, երբ եւ Եվրոպան, եւ Ամերիկան աջակցում են ձեզ, բաց մի թողեք այս հնարավորությունը: Ինչպես ցույց է տալիս Վրաստանի շատ տխուր նախադեպը, օլիգարխի օգտին եւ Փաշինյանի դեմ քվեարկելը բացարձակապես ինքնասպանական կլինի, եւ ես հույսս դնում եմ ձեր մեծ ազգի իմաստնության վրա, որ դուք երբեք նման քայլ չեք անի»:

Իսկ ի՞նչ արեց Իվանիշվիլին, եւ ի՞նչ է շահել Վրաստանը նրա քաղաքական առաջնորդության օրոք. տնտեսական տպավորիչ ցուցանիշներ, զարգացում, արտաքին հավասարակշռված քաղաքականության շնորհիվ վստահելի գործընկերություն՝ ինչպես ԱՄՆ-ի, ԵՄ-ի, տարածաշրջանի երկրների, այնպես էլ աշխարհի մյուս կենտրոնների հետ: Ավելին, հենց գործող վարչակազմի կամքի շնորհիվ Վրաստանը չներքաշվեց ռուս-ուկրաինական պատերազմի մեջ, չնայած Ռուսաստանի հետ ունեցած «հին հաշիվներին»: Վրաստանը զերծ մնաց Մոսկվայի դեմ երկրորդ ճակատ բացելու հանցավոր արկածախնդրությունից, ավելին՝ հիմա սկսել են խոսել Հարավային Օսիան եւ Աբխազիան վերադարձնելու ծրագրերի մասին, ինչին Ռուսաստանում ըմբռնումով են արձագանքում: Փաստն այն է, որ հենց Իվանիշվիլու Վրաստանն այսօր զարգացող եւ օրինակելի պետություն է՝ կայուն տնտեսական զարգացմամբ, ինքնիշխանության բարձր մակարդակով, ներքին ու արտաքին վայրիվերումների նկատմամբ պետական բարձր իմունիտետով ու իրական խաղաղ եւ բարգավաճ ապագայի տեսլականով:

Այս համատեքստում էլ պետք է հունիսի 7-ին հայ ընտրողը հետեւություններ ունի, համադրի փաստերն ու հնարավորությունները եւ գիտակցաբար չընտրի Փաշինյանին ու նրա խմբակին՝ հանուն ուժեղ, արժանապատիվ, համաշխարհային քարտեզի վրա իր կայուն դիրքն ունեցող Հայաստանի:

Արա ԱԼՈՅԱՆ

60-ՕՐՅԱ ՀՐԱԴԱԴԱՐՆ ԱՄՆ-Ի ԵՎ ԻՐԱՆԻ ՄԻՋԵՎ ՇԱՏ ՓԽՐՈՒՆ ԿԼԻՆԻ

Քաղաքագետ Դմիտրի Բրիջեն կարծում է, որ 60-օրյա հրադադարի մասին հուշագրի ստորագրումն ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ կլինի շատ փխրուն: Այն հնարավոր չի լինի համարել լիարժեք խաղաղության համաձայնագիր: Քաղաքագետը կարծում է, որ դա ավելի շուտ ժամանակավոր ընդմիջում կլինի, սակայն, ամեն դեպքում, բանակցային շրջանակ է, որը պետք է հաստատվի երկրների կողմից: Իհարկե, դա ռազմավարական կարգավորում չէ: Բրիջեն նշում է, որ շարունակում են պահպանվել տարաձայնությունները՝ կապված թե՛ նավագնացության, թե՛ միջուկային ծրագրի հետ: Ժամանակավոր այդ հնարավոր դադարի միակ դրական արդյունքը կարող է համարվել նավթի գների նվազումը, որը, անշուշտ, լինելու է այդ դեպքում:

Ռուսական «Իզվեստիայի» հետ զրույցում քաղաքագետն ասել է, որ Միացյալ Նահանգները ներկայիս իրավիճակում փաստացի ընդունում է, որ առանց Իրանի անհնար է Հորմուզի նեղուցում ապահովել ազատ նավագնացության անվտանգություն: Խոսքը, ընդ որում, ոչ թե Թեհրանի կողմից նեղուցի ամբողջական վերահսկման իրավունքի ճանաչման մասին է, այլ այն բանի, որ Վաշինգտոնը ստիպված է հաշվի առնել այն, որ Իրանը կարող է նավագնացության համար ռիսկեր ստեղծել, հետեւաբար՝ պետք է վերջինիս հետ պայմանավորվել: Նույնիսկ ռազմական ուժով ԱՄՆ-ն չի կարողանա ապահովել ազատ եւ անվտանգ նավագնացություն՝ առանց Իրանի մասնակցության՝ նշում է Դմիտրի Բրիջեն: Միաժամանակ, սահմանափակ է նաեւ հնարավոր պայմանավորվածությունների կայունությունը: Նույնիսկ այն դեպքում, երբ վառելիքի շուկայում գները սկսեն նվազել, միեւնույն է, շուկան միշտ սպասողական վիճակում է լինելու, քանի որ նման դեպքերում միշտ կա հուշագրի խախտման կամ առոչինչ հայտարարման վտանգ՝ նախքան լիարժեք կարգավորման բանակցությունները կամ ամբողջական կարգավորման փաստաթղթի ստորագրումը: Բրիջեն նաեւ ասել է, որ այն իրավիճակը, որն այսօր առկա է Մերձավոր Արեւելքում, անխոս, իր ազդեցությունը թողնում է այլ ռեգիոնների վրա՝ Հարավային Կովկասից մինչեւ Կենտրոնական Ասիա: Այս իրավիճակը բացասական ազդեցություն զգալիորեն թողնում է նաեւ համաշխարհային տնտեսության վրա:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆԱՄԱԿ

ՄԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ, ՈՐԸ ԵՍ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԷԻ ՍԵՐ ԱՐՏԱՀԱՅՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՒՄ Է ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ

Որպես սփյուռքահայ մայր, երգչուհի եւ մարդասիրական գործունեությամբ զբաղվող մարդ՝ ես միշտ հավատացել եմ, որ իմ տեղը քաղաքականության մեջ չէ՝ իմ տեղը Հայաստանի ժողովրդի կողքին է: Ես առաջին անգամ Հայաստան եկա 2015 թվականին՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումներին մասնակցելու համար: Այդ առիթով ստեղծեցի խաղաղասիրական մի նախաձեռնություն՝ After April 24th 2015, Magic Armenians - Your Choice to Move On… (2015 թվականի ապրիլի 24-ից հետո, Հրաշք Հայեր, ձեր ընտրությունն է՝ շարժվել առաջ) անվամբ: Ինչպես աշխարհի տարբեր ծայրերից Հայաստան եկած բազմաթիվ հայեր, ես էլ անմիջապես սիրահարվեցի այս երկրին: Կա մի զգացում, որը դժվար է բացատրել: Այն պահին, երբ ոտք ես դնում Հայաստան, զգում ես, որ վերջապես տուն ես վերադարձել: Տարիների ընթացքում ես, ամուսինս եւ մեր չորս երեխաները մեր կյանքը կիսեցինք Լյուքսեմբուրգի եւ Հայաստանի միջեւ: Ամուսինս, որը բելգիացի է, այնքան խորն ընդունեց Հայաստանը, որ մկրտվեց Հայ առաքելական եկեղեցում: Միասին մենք փորձեցինք մեր երեխաներին հնարավորություն տալ՝ մեծանալու երկու աշխարհների միջեւ՝ միաժամանակ ամուր պահելով նրանց կապը հայկական եւ քրիստոնեական արմատների հետ: Ինչպես բազմաթիվ սփյուռքահայեր, թավշյա հեղափոխությունից հետո մենք շարունակեցինք մեր ճանապարհը Հայաստանի հետ, որովհետեւ հավատում էինք նոր Հայաստանին:

Մենք հույս ունեինք տեսնել ավելի ուժեղ, ավելի բարեկեցիկ եւ աշխարհում ավելի հարգված երկիր: Մենք ցանկանում էինք տեսնել խաղաղ ապրող մարդկանց, ովքեր իրականացնում են իրենց երազանքները, ստեղծում ընտանիքներ եւ կառուցում ապագա, որն արժանի է իրենց զոհողություններին: 2018 թվականի նոյեմբերին ես մեկնեցի Արցախ՝ մեր զինվորներին ոգեւորելու համերգների եւ մոտիվացիոն ելույթների միջոցով: Այցելեցի Ստեփանակերտ եւ երգեցի «Եղնիկներ»-ում: Այդ ուղեւորությունը նկարահանվեց «Մարդիկներ» վերնագրով: Ես հիացած էի Ստեփանակերտի գեղեցկությամբ եւ մինչ օրս հիշում եմ, թե ինչպես էի գործընկերոջս հարցնում, թե ինչու Երեւանը, Հրազդանը կամ Սեւանը նույն հոգատարությամբ, տեսլականով եւ համարձակությամբ չեն զարգացրել:

Անցան տարիներ. 2020 թվականի 44-օրյա պատերազմն ընդմիշտ փոխեց Հայաստանը եւ բոլոր հայերին: Պատերազմի օրերին ես Հայաստանում էի: Ինչպես շատ ուրիշներ, ես նույնպես ցանկանում էի օգնել: Ինձ ասացին, որ իմ տեղը ռազմաճակատում չէ, այլ այն մայրերի եւ հայրերի կողքին, ովքեր կորցրել էին իրենց որդիներին: Հիշում եմ, թե ինչպես էի գրկում սգացող ծնողներին, լացում նրանց հետ, աղոթում նրանց հետ եւ փորձում թեկուզ փոքր-ինչ մխիթարություն բերել այդ սարսափելի օրերին: Այդ ժամանակահատվածում ես նաեւ գրեցի STOP երգը եւ այն կատարեցի ընտանիքիս հետ: Մենք այն նվիրեցինք մեր բոլոր ընկած հերոս զինվորների հիշատակին: Այդ ընտանիքների ցավը բոլոր հայերինն է: Պատերազմից հետո Հայաստանի տարբեր մարզերում ունեցած ելույթներիս եւ այցելություններիս ընթացքում ես հաճախ հիշեցնում էի, որ մեր ժողովրդի իրական ոսկին հենց Հայաստանն է: Եվ որ այդ պահից սկսած՝ մենք պետք է ամեն ինչից վեր դասենք Հայաստանը՝ նրա անվտանգությունը, զարգացումը եւ ապագան:

Եվ, այնուամենայնիվ, հաջորդող տարիներին ես եւ իմ երեխաները սկսեցինք նկատել մի բան, որը խորապես տխրեցրեց մեզ: Երբեմն մենք զգում էինք, որ Հայաստանի հայերի եւ սփյուռքահայերի միջեւ աճում է որոշակի հեռավորություն: Լինում էին պահեր, երբ մեզ թվում էր, թե մեզ դատում են, չեն հասկանում կամ նույնիսկ չեն ընդունում: Գուցե պատերազմի վերքերը դեռ չափազանց թարմ են: Գուցե վիշտը երբեմն վերածվում է հիասթափության: Գուցե հիասթափությունը փորձում է մեղավորներ գտնել: Բայց ես համոզված եմ, որ մենք պետք է շատ զգույշ լինենք: Հայրս՝ Ջոնը, ծնվել է Պաղեստինում եւ ստիպված է եղել հեռանալ ծննդավայրից: Ես ծնվել եմ Ճապոնիայում, իսկ հետագայում մեր ընտանիքը տեղափոխվեց Լիբանան, որտեղից նույնպես ստիպված եղանք փախչել՝ պատերազմի պատճառով: Մեր ողջ կյանքի ընթացքում մենք բազմիցս նոր կյանք ենք սկսել՝ միայն նրա համար, որ կրկին ստիպված լինենք թողնել ամեն ինչ՝ պատերազմի, խտրականության կամ մեզնից անկախ հանգամանքների պատճառով: Հենց այդ պատճառով է, որ հայրենիքն այդքան թանկ ու անփոխարինելի արժեք է մեզ համար: Այն միակ վայրն է, որտեղ յուրաքանչյուր հայ հնարավորություն ունի վերագտնելու այն, ինչ կորցրել է իր կամ իր նախնիների կյանքի ընթացքում:

Անկախ նրանից՝ ապրում ենք Երեւանում, Ստեփանակերտում, Փարիզում, Բեյրութում, Լոս Անջելեսում, Մոսկվայում, Բրյուսելում կամ Լյուքսեմբուրգում, մենք մնում ենք մեկ ժողովուրդ: Մեր փորձառությունները կարող են տարբեր լինել, սակայն պատմությունը նույնն է: Մենք՝ բոլորս, ժառանգել ենք ցեղասպանության հետեւանքները: Մենք՝ բոլորս, ժառանգել ենք կորուստը: Եվ մենք՝ բոլորս, ժառանգել ենք մի հայրենիք, որը սիրում ենք եւ նույնիսկ այն ժամանակ, երբ տարբեր կարծիքներ ունենք նրա ապագայի վերաբերյալ: Հենց այդ պատճառով է, որ ես դժվարությամբ եմ ընդունում, երբ հայերը մատնացույց են անում մյուս հայերին: Երբ մենք վնասում ենք միմյանց, միայն ուժեղացնում ենք մեր թշնամիներին եւ ճանապարհ բացում կեղծ բարեկամների համար:

Որտեղ էր Ամերիկան, երբ մեր երիտասարդ տղաները զոհվում էին իսրայելական արտադրության անօդաչու սարքերի հարվածներից: Որտեղ էին եվրոպական պատվիրակությունները, երբ Արցախը ենթարկվում էր էթնիկ զտման: Ինչու են մեր գերիները մինչ օրս պահվում Բաքվում: Եվ ինչու նրանց չի թույլատրվում վերադառնալ Հայաստան: Ես հասկանում եմ այս հարցերի հետեւում կանգնած ցավը: Ես հասկանում եմ զայրույթը: Ես հասկանում եմ վիշտը: Բայց չեմ հավատում, որ մեր ապագան կարող է կառուցվել միմյանց մեղադրելու վրա: Մենք կամ միասին ենք բարձրանալու, կամ միասին ենք ընկնելու:

Վերջին շրջանում ես հաճախ եմ մտածում մի շատ պարզ ժեստի մասին՝ մատներով կազմված սրտի նշանի: Անցյալ ամռանը, երբ նկարահանում էինք իմ HOKIS տեսահոլովակը, երգի վերջում ես ինքնաբուխ կատարեցի այդ ժեստը: Այն որեւէ քաղաքական նշանակություն չուներ: Դա պարզապես երախտագիտության, սիրո եւ գնահատանքի արտահայտություն էր: Այդպես ես շնորհակալություն էի հայտնում Աստծուն, իմ թիմին, իմ հանդիսատեսին եւ բոլոր այն մարդկանց, ովքեր օգնեցին իրականություն դարձնել այդ նախագիծը: Ավելի ուշ նույն ժեստը սկսեց ասոցացվել քաղաքական մի շարժման հետ: Հանկարծ մի խորհրդանիշ, որը ես օգտագործել էի սեր արտահայտելու համար, օգտագործվեց քաղաքական ուժի կողմից: Արդյունքում ես սկսեցի երկմտել սեփական երգս տարածելու հարցում, որովհետեւ վախենում էի, որ մարդիկ կարող են սխալ հասկանալ իմ մտադրությունները: Այդ փորձառությունն ինձ ստիպեց մտածել:

Երբ մենք խոսում ենք սիրո լեզվով, պետք է նաեւ ընդունենք դրա իրական իմաստը: Սերը բացառելը չէ: Սերը բաժանելը չէ: Սերը կասկածելը չէ: Սերը հարգանք է: Սերն արժանապատվություն է: Սերը մյուսին հնարավորություն տալն է: Երբ Հայաստանը մոտենում է հերթական կարեւոր ընտրություններին, իմ հույսը շատ պարզ է: Հուսով եմ, որ կհիշենք՝ ոչ մի քաղաքական ուժ Հայաստանի տերը չէ, ոչ մի քաղաքական գործիչ Հայաստանի տերը չէ: Հայաստանը պատկանում է բոլոր հայերին՝ նրանց, ովքեր ապրում են Հայաստանում, նրանց, ովքեր ստիպված են եղել հեռանալ, նրանց, ովքեր երազում են վերադառնալ: Նրանց, ովքեր մնացել են, նրանց, ովքեր կորցրել են ամեն ինչ: Նրանց, ովքեր շարունակում են հուսալ: Բոլոր հայերն իրենց ներդրումն ունեն Մայր Հայաստանի կառուցման գործում՝ իրենց ուժերի, հնարավորությունների եւ ճակատագրի չափով: Մենք՝ բոլորս, այս պատմության մասն ենք, եւ ոչ ոք չպետք է մնա դրա սահմաններից դուրս:

Ինչքան էլ ես սիրեմ իմ ամուսնուն, նա, միեւնույն է, բելգիացի է: Թեեւ նա ամբողջ սրտով ընդունել է իմ ժողովրդի պատմությունն ու մշակույթը, նա գիտի, որ միայն հայը կարող է լիովին հասկանալ մեկ այլ հայի: Դա եւ մեր ուժն է, եւ մեր ցավը: Եվ հենց դա է մեզ յուրահատուկ դարձնում աշխարհի ցանկացած անկյունում:

Եվ այսօր ես սա ասում եմ խորը համոզմամբ. եթե մեր հայրենիքը երբեւէ կրկին վտանգի առաջ կանգնի, ոչ ոք չի գա մեզ փրկելու: Հայաստանը փրկելու են միայն հայերը: Մենք պետք է պատրաստ լինենք ցանկացած հնարավորության: Մենք պետք է դա հիշենք: Իմ աղոթքն այն է, որ մենք կարողանանք միմյանց հետ խոսել ավելի մեծ հարգանքով, ավելի մեծ համբերությամբ եւ ավելի մեծ կարեկցանքով: Որովհետեւ, վերջի-վերջո, Հայաստանը չի փրկվելու ատելությամբ: Հայաստանը փրկվելու է այն հայերի շնորհիվ, ովքեր չեն դադարում սիրել միմյանց:

Մարի Վան Մարկ ԻՍԿԱՆԴԵՐՅԱՆ
Բելգիա

ՆՐԱ ԵՐԳԸ ՄԱՐԴԿԱՆՑ ՎԵՐԱԴԱՐՁՆՈՒՄ ԷՐ ԱՌ ՀԱՎԱՏՔ

Հունիսի 1-ը ոչ միայն Երեխաների պաշտպանության եւ Նիկոլ Փաշինյանի ծննդյան օրն է, այլ նաեւ՝ 20-րդ դարի ամենահայտնի հայ երգչուհիներից Լուսինե Զաքարյանի ծննդյան օրը: Դժվար թե որեւէ մեկը խոսի հայ եկեղեցական կամ հոգեւոր երաժշտության մասին ու շրջանցի նրա անունը: Ժամանակակիցներն ասում են, որ նրա ձայնը նման էր աղոթքի, մարդկանց վերադարձնում էր առ Աստված ունեցած հավատքը: Պատահական չէ, որ շատերը նրան համարում են հայ հոգեւոր երաժշտության վերածննդի խորհրդանիշը:

Լուսինե Զաքարյանը ծնվել էր 1937-ին, Ախալցխեում՝ ընտանիքում, որտեղ երաժշտությունը նրանց կյանքի անբաժանելի մասն էր կազմում: Վաղ տարիքից զգացվել են նրա բացառիկ վոկալային ունակությունները: 1952-ին ընտանիքը տեղափոխվել է Երեւան, որտեղ ապագա երգչուհին երաժշտական կրթություն է ստացել Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում: Ճակատագրական է լինում նրան Սբ Էջմիածնի մայրավանք՝ Մայր տաճարի երգչախումբ հրավիրելը: Այստեղ բացահայտվում է եկեղեցական երաժշտության կատարման նրա եզակի շնորհը: Նրա կատարումը լսելով՝ Վազգեն 1-ին կաթողիկոսը խորապես տպավորվել է եւ մշտապես աջակցել երգչուհուն: Ասում են՝ հենց նա է թարգմանել երգչուհու անունը (Լուսինե Զաքարյանն անձնագրով եղել է Սվետլանա): Վազգեն 1-ինը հորդորել է ստորագրել Լուսինե, եւ այդ անունով էլ նրան ճանաչում է աշխարհը: Նրա արվեստը ճանաչում է ձեռք բերել խորհրդային շրջանում, երբ եկեղեցական երաժշտությունը լռելյայն արգելքի տակ էր, եւ իշխանությունների սրտով չի եղել այն: Ավելին, նա հայ եկեղեցական երաժշտությունը դուրս է բերել եկեղեցական միջավայրից եւ տարածել ամբողջ աշխարհում: Նրա երգացանկում հատկապես մեծ տեղ էին գրավում Կոմիտաս վարդապետի միջնադարյան շարականները, ժողովրդական երգերը, դասական վոկալ մշակումները: Նրա լիրիկական սոպրանո ձայնը տարբերվում էր եզակի մաքրությամբ, խորությամբ եւ անսովոր ազդեցությամբ: Նա շրջագայել է աշխարհով, եղել բոլոր հայկական գաղթօջախներում: Ասում են՝ այդ տարիներին շատերն Էջմիածին էին գնում՝ կիրակի օրերը, Սբ պատարագին Լուսինեի կատարումները լսելու համար: Մեծանուն երգչուհին վախճանվել է 1992-ին՝ 55 տարեկանում:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՈՐՏԵ՞Ղ Է 2018-ԻՑ ԱՌԱՋ ԱԿՏԻՎ ՔԱՂԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ՈՎՔԵ՞Ր ԵՆ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ ՆՐԱՆՑ ԱԶԱՏԱԾ «ՍՈՒՐԲ ՏԵՂԸ»

Վերջին 2 տասնամյակում Հայաստանում ապրած, իրադարձություններին, ներքաղաքական անցուդարձին հետեւած յուրաքանչյուր ոք հրաշալի ծանոթ է «մինչհեղափոխական» Հայաստանի բոլոր խնդիրներին ու արատավոր բարքերին, ծանոթ է նաեւ դրա դեմ ժամանակին խոսող, պայքարող մարդկանց համայնապատկերին: Այսօր արդեն կարող ենք արձանագրել, որ այս մարդկանց շարքերն էին ներթափանցել նաեւ նրանք, ովքեր, պարզվեց՝ հանուն փողի, իշխանության կամ պաշտոնի պայքարողներ էին ընդամենը եւ իրենց ուզածին հասնելուց հետո ուղղակի անհետացան ասպարեզից: Մանավանդ՝ 2010-ականներին քաղհասարակության շարքերը ստվարանում էին, նոր «պայքարող» դեմքեր էին հայտնվում, որոնց ճնշող մեծամասնությունը դրսում լավ կրթություն էր ստացել, լայնախոհ ու հայրենասեր մարդկանց տպավորություն էր թողնում:

Ե՞րբ սկսվեց այս մարդկանց պայքարը, արդյոք 2018 թվականի իշխանափոխությունը վերջնական հանգրվա՞ննն էր, երբ ավարտվեց այդ պայքարը: Նրանց մեծ մասն այսօր կամ պատգամավոր է, կամ իշխանական որեւէ օղակի, պետապարատի աշխատող, կամ լքել է երկիրը, կամ անհետացել հանրային պայքարի ասպարեզից:

Բացի այն, որ չիմացանք, թե հանուն ինչի էր պայքարում այդ «քաղհասարակությունը», չիմացանք նաեւ, թե ում դեմ էր աշխատում, արդյո՞ք թերությունների, սխալ աշխատող համակարգերի, թե՞ անձերի:

«Մինչհեղափոխական» Հայաստանի քաղհասարակության ներկայացուցիչներն ակտիվ կապերի մեջ էին նաեւ արեւմտյան երկրների երեւանյան դեսպանատների հետ, նրանցից շատերն իրենց ինչ-ինչ ծրագրերի համար գրանտներ էին ստանում արտասահմանից, ինչպես ժողովրդական խոսքն է ասում՝ մատների վրա կարելի է հաշվել նրանց, ովքեր մնացին իրենց տեղում ու շարունակեցին պայքարը: Այս մարդիկ 2018-ին կարծես միանգամից խլացան ու կուրացան, սկսեցին չտեսնել Փաշինյանի իշխանության ներկայացուցիչների խուլիգանական պահվածքը, ատելության խոսք ու բռնության կոչեր պարունակող խոսույթը, սկսեցին չտեսնել նաեւ իրավապահ համակարգի ակնհայտ խախտումներն ու ապօրինությունները, օրինակ՝ քաղակտիվիստներին ապօրինի բերման ենթարկելը, սահմռկեցուցիչ խոշտանգումները, բողոքի ակցիա անողների վրա մարտական նռնակներ նետելը: Չնկատեցին Հայաստանում եւ հատկապես Երեւանում կատարվող էկոցիդը, որի արդյունքում Երեւանը բետոնե ջունգլի է դառնում, չեն տեսնում գրեթե ամենօրյա կտրվածքով ի հայտ եկող՝ կոռուպցիոն ռիսկեր պարունակող աղմկահարույց միջադեպերը, չեն հետաքրքրվում տենդերներ շահողներով, այդ տենդերների կատարման ընթացքով:

Այս բոլոր հարցերով զբաղվող եւ որպես քաղհասարակություն ընկալվող մարդիկ նախկին իշխանության օրոք իրենց հանրային խոսքում եւ գործողություններում երբեք չէին շրջանցում օրվա իշխանության որեւէ վատ արարք, որեւէ սխալ, հակառակը՝ դեմոնիզացնում էին վերջինիս: Իսկ այսօր նրանցից շատ քչերն են երբեմն-երբեմն խոսում, այն էլ տպավորություն է, թե ստիպված են խոսում՝ հերթապահ որեւէ բան ասելով, որ հանրության հանդիմանություններին չարժանանան:

Մեզ ծանոթ քաղհասարակության՝ պարապուրդի մատնվելուց երկար ժամանակ է անցել, եւ այդ բացը կարծես սկսել է փակվել՝ սկսել են ի հայտ գալ իրապես պայքարող ակտիվիստներ, իրավաբան-իրավապաշտպաններ, բնապահպաններ: 2020 թվականի պատերազմից հետո ընթացող երկարատեւ փողոցային ակցիաների, հանրահավաքների արդյունքում նոր քաղհասարակություն է կարծես ծիլեր տալիս: Ընդդիմադիր դաշտի նկատմամբ իրականացվող ճնշումները, Դիմադրության, Սրբազան շարժումները, Երեւանում իրականացվող էկոցիդը եւ այլ հանգամանքներ ստիպեցին շատերին ավելի ակտիվ լծվել պայքարի, ու նոր-նոր ձեւավորվող քաղհասարակությունն արդեն սկսում է աշխատել հօգուտ հանրության ու երկրի:

«Հրապարակը» զրուցել է հետհեղափոխական Հայաստանի, դեռեւս առանց գրանտների աշխատող քաղհասարակության մի քանի ներկայացուցչի հետ՝ հասկանալու պայքարի նրանց մոտիվացիան, խնդիրները, որոնց նրանք բախվում են, ու մի շարք այլ հարցեր:

Վերջին տարիներին, երբ հանրությանը ծանոթ էկոակտիվիստներին կարծես էլ չենք տեսնում, բնապահպանական խնդիրների բարձրաձայնման առաջին շարքերում Երեւանի ավագանու անդամ Քրիստինա Վարդանյանին ենք տեսնում: Արդեն 2 տարի է՝ մի խումբ իրավաբան-իրավապաշտպաններ անվճար հիմունքներով իրավական աջակցություն են տրամադրում քաղհալածյալներին ու քաղբանտարկյալներին: Նրանք միավորվել ու ստեղծել են «5 իրավապաշտպանների նախաձեռնությունը»:

Տարբեր կարեւոր հարցերով, որոնց մասին 2018-ից առաջ կաղաղակեին քաղհասարակության որոշ խմբեր, այսօր խոսում են տարբեր խիզախ անհատ ակտիվիստներ: Նրանցից մեկը ռեժիսոր, իրավապաշտպան Հովհաննես Իշխանյանն է: Ամենատարբեր հնարավոր կոռուպցիոն սխեմաների մասին է հաճախ բարձրաձայնում բլոգեր Արթուր Չախոյանը՝ երբեմն հարձակումների ենթարկվելով պրոիշխանական շրջանակների կողմից, բերման եւ քրեական հետապնդման ենթարկվելով իրավապահների կողմից, անգամ՝ երբ ակնհայտորեն զոհն ինքն է:

Եթե մինչեւ 2018-ի իրականությունում երկրում մանկապղծության դեպք բացահայտվեր, քաղհասարակությունը, վստահաբար, կհասներ իրավապահ համակարգի բարձրաստիճան պաշտոնյաների պաշտոնանկություններին, կաղմկեր, կբողոքեր: Վերջերս ականատես եղանք, թե ինչպես մի խիզախ լրագրող՝ Սյուզի Բադոյան անունով, բացահայտեց նման դեպք, հետեւողականորեն գնաց այդ դեպքի բացահայտման հետեւից, կարողացավ հասնել ոճրագործների ձերբակալմանն ու մի քանի պաշտոնյաների պաշտոնանկությանը, իսկ նախկին քաղակտիվիստները դրան որեւէ մասնակցություն չունեցան:

Վերացվել են արդյոք բոլոր այն խնդիրները, որոնց մասին բարձրաձայնում էին մինչեւ 2018-ը, իհարկե՝ ոչ: Նախկինում եղած քաղհասարակության պայքարի մոտիվացիաների եւ արդյունքների մասին հետեւությունները թողնում ենք ձեզ:

Սամվել ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ



Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 2.06.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Զլեկոծվել ենք բոլորս: Հանդուրժողականությունը չքացել է մեր ընտանիքներից: Մեկս մյուսի նկատմամբ թշնամացել ենք, բանավեճերի ժամանակ չկան հարգանք եւ զիջողականություն... եւ այս բոլորը գալիս է վերեւից՝ իշխանությունից, եւ հատկապես՝ այդ իշխանությունն ապաշնորհ գլխավորող մեկ մարդուց: Նա հենց սկզբից մեր ժողովրդին բաժանեց հնի ու նորի, սեւի ու սպիտակի՝ իրեն համարելով ոչ թե համայն հայության, այլ միայն իր թիմակիցների վարչապետը: Նա իր ոչ հավասարակշռված վարքով ու գռեհիկ արտահայտություններով միայն ատելություն ու ազգամիջյան թշնամանք սերմանեց բոլորիս մեջ:

Նայեք նրա քարոզարշավի բովանդակությանն ու որակին. չկա ոչ մի խոսք նոր ծրագրերի, նոր գործելաոճի կամ չիրագործված խոստումների իրականացման հուսադրող նախադրյալների մասին: Կա միայն ցածրորակ ու երբեմն փողոցային մակարդակի հասնող սպառնալիք՝ այս ու այն ընդդիմախոսի հասցեին: Ոչ մի խոսք արտաքին քաղաքականության հայեցակարգային ուղղության՝ մտածված ու մշակված հրամայականների վերաբերյալ: Մարդիկ խորապես մտահոգված են իրենց աշխատանքի ապագա հեռանկարով: Հարց են տալիս ռուսական գազի անջատման հետեւանքների մասին, ասում է՝ մենք սեփական գազ կունենանք: Որտեղի՞ց: Ի՞նչ ասել է սեփական գազ... երբեւէ լսե՞լ եք, որ Հայաստանի ընդերքում գազի պաշարներ հայտնաբերված լինեն: Եթե ասեր՝ գազ կստանանք Իրանից, ինչ-որ առումով տրամաբանական կլիներ: Իրանը մեր ստրատեգիական բարեկամ երկիրն է՝ գազի հսկայական պաշարներով: Կամ արդյոք որեւէ հայեցակարգ կամ բանակցություն այդ ուղղությամբ: Ինչքան գիտենք՝ ոչ: Նախկինում եղել է. նույնիսկ խոշոր տրամաչափի գազատար էր հասել մինչեւ Եղեգնաձոր, սակայն հայտնի քաղաքական պատճառներով խափանվեց: Իսկ դրա վերագործարկումը սրանց գործը չէ: Մյուս տարբերակն Ադրբեջանն է... Բայց կարո՞ղ ենք արդյոք ապավինել մի երկրի, որի ղեկավարը մեր երկիրը համարում է «Արեւմտյան Ադրբեջան»... Դեռ մի կողմ թողած այն, որ նրանք խիստ վերապահումով կմոտենան այս հարցին՝ հաշվի առնելով նրանց կապերը Ռուսաստանի հետ: Ո՞ւր կուղարկես հսկայածավալ այն արտադրությունը, որի հաշվին ապրում ու շնչում է մեր տնտեսությունը, եթե մի օր էլ Ռուսաստանն արգելափակի դրանց մուտքը: Մակրո՞ն է իր երկրի դռները բացելու մեր դիմաց, թե՞ Զելենսկին...

Դատարկամիտ խաղաղասիրական խոստումներով կամ ցուցադրական տոնախմբությամբ ժողովրդի աչքին թոզ փչելով չէ, թե երկիրը հեռու կպահվի պատերազմի վտանգից: Հայաստանն իր աշխարհագրական բարդ դիրքով ու կացությամբ պարտավոր է ունենալ բծախնդրորեն մշակված եւ ճկուն արտաքին քաղաքականություն վարող, լրջախոհ, բանիմաց ու հավասարակշռված դիվանագետներ: Իսկ սրանք ո՞ւր, դիվանագիտությունն ուր... Մակրոնի հետ գրկախառնվելով ու Զելենսկուն հրավիրելով ի՞նչ են ուզում ասել եւ ո՞ւմ: Արկածախնդրություն ասենք, թե՝ ինչ... Կարծում են, թե Արեւելքից հեռանալով՝ Արեւմուտքն իր գիրկը բացելու է իրենց դիմաց:

Պահի լրջությունը պետք է սթափեցնի բոլորիս: Ինչպես միշտ, պետք է ապավինենք մեր իմաստուն եւ բանիմաց քաղաքացիների ակտիվ մասնակցությանն այս ընտրություններին: Անսերելի բացթողում կլինի այս անգամ եւս տանը մնալ ու թողնել, որ փոքրաթիվ մասնակիցների ընտրությամբ սրանց դարձյալ հաջողվի շարունակել իրենց ապիկարություններն ու ազգակործան գործունեությունը: Այս ընտրությունը ճակատագրական է լինելու:

Վահան ԴԱՐԲԻՆՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am